



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



14
24



2010

Տ Ա Ք Ա Գ Յ Ա Մ

Զ Մ Ի Գ Գ Ո Ր Մ Դ Ն Ա Մ Ի


Доз. Ценз. Тифлисъ. 16 Августа, 1881 г.

Տ Ա Գ Ո Ր Մ Դ Ն Ա Մ Ի Ե Մ Ի Գ Գ Ո Ր Մ Դ Ն Ա Մ Ի

Տ Ա Գ Ո Ր Մ Դ Ն Ա Մ Ի

Տ Ա Գ Ո Ր Մ Դ Ն Ա Մ Ի

Տ Ա Գ Ո Ր Մ Դ Ն Ա Մ Ի



Տ Ա Գ Ո Ր Մ Դ Ն Ա Մ Ի

929
41

Тип. М. Вартамянъ и К°, Троиц. пер. д. № 11



1881

753-2010



Ի Ի Բ Գ Ո Ր Ո Վ Ա Գ Ո Ւ Թ Մ Օ Ր

Ե Յ Ի Մ Ի Ա Յ Շ Ա Հ Բ Ո Ւ Գ Ա Ղ Ե Ա Ն Ի

Ա Ն Մ Ո Ռ Ա Ն Ա Լ Ի Յ Ի Հ Ա Տ Ա Վ Ի Ն

Ն Ո Ւ Ի Բ Ո Ւ Մ Է

Թ ար գ մ ան ի ջ ռ

ուշադրութեամբ զննում շրջապատող առարկաները: Այդպիսի դաստիարակութիւնը պէտք է առանց ձանձրացնելու եւ առանց ստիպողականութեան կատարուի, խրախուսելով միայն եւ եթբնատուր ձիրքերի բնական աճեցողութիւնը:

Այդպիսով, կարելի է մանկան մէջ բոլոր գիտութեանց, արուեստների եւ առաքինութեանց սերմերը ցանել, որոնք ապա բնական ճանապարհով կը զարգանան, հասակն առնելու հետ միասին աննկատելի կերպով յառաջ գնալով: Այս սերմերը երբէք չեն ոչնչանայ: Ծերունին կարող է մոռանալ, ինչ որ երեկ պատահել էր իրան, բայց մանկական յիշատակները երբէք չեն ջնջուի նորա յիշողութիւնից:

Ապա ուրեմն, մենք կ'աշխատենք ցոյց տալ այն ամենը, ինչ մեր կարծիքով իւրաքանչիւր բարի մօր պարտականութիւնն է:

Ք.

Այս հեղինակութիւնը ոչ թէ շուտափոյթ մտածած նախագծի՝ այլ փորձով ստուգուած ծանր աշխատանաց արդիւնք է: Իեւ 1855 ամի, սեպտեմբերի 24-ին եւ 1856 ամի յունիսի 9-ին ես երկու անգամ դասախօսել եմ այս առարկայի

մասին: *). Ո՛չ մի հարց այնպէս երկար ու այն աստիճան չէր զբաղեցնում ինձ, որքան այս հարցը: Եւ ո՛չ միայն խօսող երեխայքը, այլ եւ կոյրերն ու խուլ համբոները միահաւասար զբաղեցնում էին ինձ: Վերջին հանգամանքը, տոկուն հետազօտութեանց հետ կցորդուած, վերջապէս ինձ այն եղրակացութեանց հասցրեց, որոնց ես մտադիր եմ առաջի առնել: Իմ Անգլիայ, Շօտլանդիայ, Նվեդիայ, Ֆինլեանդիայ, Ռուսաստան, Գանիայ, Զուիցէրիայ, Իտալիայ ճանապարհորդութեանս ժամանակ. եւ իմ երկարատեւ ծովագնացութեանցս միջոցին Մեծ եւ Հնդկաց ովկիանոսներում, այս հարցն անդադար մտատանջում էր ինձ. եւ բոլոր իմ դիտողութիւնները, հետազօտութիւններն ու ջանքերը նորա բացատրութեանն էին նպաստում: Ես համոզուեցայ, որ ամենուրեք եւ միշտ զգում էին մատտող հասակի դաստիարակութեան կարեւորութիւնը, եւ հէնց այն ժամանակ ցանկու մանկան հոգում այն սերմերը, որոնց զարգացումից յառաջանում է մարդը: Ես իմացայ նոյնպէս, որ ամենուրեք եւ միշտ զգում էին այն մեծ նշանակութիւնը, որը այս գործում պատկանում է մօրը, ինչպէս նոյն

*) Գիտութեանց ձեմարանի հաշիւներ. Հատոր XXI. 2 դ. կիսամեակ. երես 481, և XXII. հատոր. Առաջին կիսամեակ. երես 1118.

ինքն բնութեանը՝ իրական կեանքին ու նորա անմիջական երեւոյթներին։ Բայց չը նայելով սորանս դեռ եւս մինչեւ ցայժմ անմեղ մանուկները իրենց սեփական ոյժերին են թողնուած։ Նկատեցի նոյնպէս, որ ամեն անգամ երբ մարդիկ ձեռնարկում էին այս ճշմարտութիւններն իրագործելու, մինչեւ անգամ մասնաւոր դիպուածներու մտնել իրար հետ ոչինչ կապ չ'ունէին եւ չէին ենթարկուած ո՛չ մի սխտեմայի, մինչեւ անգամ այն ժամանակն էլ նշանաւոր արդիւնք էր ստացվում։

Ընդհանրապէս կարելի է ասել, որ մանկանց սկզբնական դաստիարակութիւնը դեռ եւս ո՛չ մի տեղ հաստատուն արմատ չի բռնել, ո՛չ մի տեղ դեռ եւս գաստիարակութեան կանոնաւոր եղանակ չի կազմուել մեր յայտնած սկզբունքների հիման վերայ, որոնք նոյն ինքն բնութիւնից են նախասահմանվում։ Այն ինչ ամենքը ձգտում են գէպի այդ։ Մեր հեղինակութեան նպատակը հէնց նորանումն է կայանում, որ լուծումն տանք այդ ցանկութիւններին, լրացնելով մեր ցոյց տուած զանցառութիւնը։

Կ'աշխատեմ կատարել խօստմունքներս, այս գիրքը մեծ չէ, եւ եթէ դուք ընթերցողս կը կարգաք առանց կանխակալ կարծիքների, յուսով եմ որ համոզուիք ասածներիս ճշմարտութեան մէջ։

ընցս այնչափ յոյժով զմայնմանայ միջոցերու պարզութեամբ յայնչափ արագ ազոս չ'ը գալիս ճապարակ ընթերցողները կը տեսնեն, որ իմ զաղափարները ուղղակի հակառակ են ժան ժակ ընդհանրութեան ընդհանրութեան հիմք այս սկզբունքն ընդունեց թէ. «Մարդս բարի է ծնվում. հասարակութիւնը չի կարող նորանս փշտցնել։ Այսպէս ուրեմն ամենից լաւն է մանկան մինչեւ 12 տարին եւ անելի առանց դաստիարակութեան թողնել։ Մինչեւ այդ ժամանակ նորա բնական բարութիւնը չի կարող ճշմարտ ճանտարհից շեղուիլ, այլ ընդհակառակն, բաւականին կ'ամրապնդուի չարին ընդդիմադրելու համար»։ Նորա ողջ վարդապետութիւնը այս սկզբունքի վերայ է հիմնուած։

Ակներեւ է, որ նա գիտնական աններելի սխալանաց մէջ ընկաւ, որովհետեւ բնագիտութիւնը մեղ ուսուցանում է, որ մարդս բարոյապէս բարի եւ չար հակումներով է ծնվում, ինչպէս որ ֆիզիքապէս լաւ եւ վատ հակումներով։ Այս ամենաճիշտ կերպով ապացուցուած է բնագիտական ամեն հետազօտութիւններով, մանաւանդ ժառանգականութեան վերաբերութեամբ (*). Հետեւաբար, փոխանակ մանկանը սեփական

*1 Les lois de la vie. 6-ième partie.

ոյժերին յանձնելու, նոյն իսկ ծնուելու օրից սկսած պէտք է նորա դաստիարակութեամբ զբաղուիլ: Չանալով ոչնչացնել վատ հակումները եւ լաւերը զարգացնել: Ահա մարդու դաստիարակութեան հիմնաքարը, որը բոլորովին հակառակ է ժան ժակ Բուսսոյի սկզբունքներին: Սակայն մարդիկ նախ քան գիտութիւնը, փորձով համոզուեցան այս սկզբունքի ճշմարտութեան մէջ, եւ նոյնիման ժան ժակ Բուսսօն շատ յաճախ հակասութեանց մէջ էր ընկնում, մի անգամ սխալ ընդունած սկզբունքի պատճառաւ:

Հէյնալ.

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ.

Դաստիարակութեան նշանակութիւնը:—Ի՞նչում է կայանում ճշմարիտ յառաջադիմութիւնը.—Գլխաւոր նպատակը, որը աչքի առաջ պիտի ունենալ դաստիարակութեան ժամանակ: Նշանաւոր ու կարեւոր փաստեր:

Ա.

Իւրաքանչիւր ժողովուրդ, որը ցանկանում է յաջողակ քայլեր անել յառաջադիմութեան ասպարիզում, պարտական է նախապատրաստել զօրեղ, ճշմարիտ կրթեալ ու խիստ բարոյական սերունդ. իսկ այս նպատակին հասնելու համար նա իւր լուսաւորեալ ու շարժութիւնը պէտք է ազգային լուսաւորութեան ու կրթութեան տաճարների վերայ դարձնէ, նա մանաւանդ մատաղահաս մանկանց դաստիարակութեան վերայ: «Կերպարանափոխ արէք դաստիարակութիւնը, եւ դուք կը փոխէք երկրի դիրքը» ասաց Լէյբ-

նից: Դաստիարակութեան մէջ կշիռ ու նշանակութիւն ունեցող բոլոր անձինք այս բանում համաձայն են հռչակաւոր փիլիսոփայի հետ: Ներկան ապագայ է ծնանումս որպէս սերմից յառաջանում է բոյսը:

Միայն սկզբնական դաստիարակութիւնն է հոյանաւորում հանճարը արմատում: նախապարարաստելով մեծ օրէնագէտներ, հռչակաւոր սպարապետներ, խոհեմ քաղաքագէտներ եւ առ հասարակ երեւելի անձնաւորութիւններ մարդկային գործունէութեան բոլոր ճիւղերի համար:

Ապա ուրեմն ակներեւ է, որ առաւելապէս այս դաստիարակութիւնը պէտք է գրաւէ այն մարդոց ուշադրութիւնը, որոնց ձեռքին է տէրութեանց ղեկը եւ բոլոր այն անձանց, որոց համար թանգ է հայրենեաց բարգաւաճումն ու ապագան:

Սակայն սկզբնական դաստիարակութեան մեծ նշանակութիւնը այնքան պարզ է, որ հարկ չը կայ այստեղ երկարօրէն խօսել դորա մասին: Բայց եւ այնպէս մենք կը ցանկայինք մատնանիշ անել մեր ընթերցողներին այս գործի մի կողմի վերայ, որը, մեր կարծիքով, մինչեւ ցայժմ չէ դարձրել իւր վերայ կարեւոր ուշադրութիւնը, եւ որը

մինչեւ անգամ առանձին վերցրած կարող է համոզել իւրաքանչիւրին, թէ դաստիարակութիւնը մարդկութեան յառաջադիմութեան ու կատարելագործութեան ասպարիզում առաջնակարգ դերն է խաղում:

Ինչո՞ւմն է կայանում մարդկային յառաջադիմութեան էութիւնը: Մի՞թէ երկաթուղիներ շինելը, էլէքտրական հեռագիրները, զրահաւոր նաւերը, կատարելագործուած ղէնքերը, մի՞թէ էլէքտրականութեան ու շոգիի բոլոր հրաշալիքները եւ գիտութեան, արուեստների ու արդիւնագործութեան բոլոր հսկայական ստեղծագործութիւնները, որոնցով միշտ հիանում եւ պարծենում ենք, մի՞թէ այս բոլորը կարելի է դեռ եւս յառաջադիմութեան էութիւն համարել:

Ի հարկէ որ չէ: Այս հսկայական արդիւնքները յառաջադիմութեան միայն յայտարարներն ու նշաններն են, որոնց կարող է պահպանել նոր սերունդը, եւ նոյնը կարող է փոխառնել որ եւ է անզարգացած ժողովուրդ: Իսկ յառաջադիմութեան էութիւնը նոյն իսկ մարդու կատարելագործութեան մէջ է կայանում: Տուէք մարդուն առողջ ու զօրեղ մարմին, ընտիր զգացումներ, եւ զարգացած խելք. նա այնպիսի գիւտեր կ'անէ, որոց մասին ներկայումս չենք էլ երազում: Եւ առաւել հսկայական արդիւնքներ կը յառաջացնէ, քան այն, որոնցով մենք այժմ

զափարները զարգանալուն, իբրեւ այս եղանակի անխուսափելի հետեւանքի, դուք կը զմայլեք՝ տեսնելով որ ձեր սանիկի միտքը այնպիսի զանազանակերպ, հաստատուն տեղեկութիւններով է հարստացած, որպիսին չի ունենալ այն մանուկը, որի դաստիարակները միայն եւ եթ գիտնական տեղեկութիւններ սերտելով էին զբաղեցնում նորան:

Գ. Իժուար չէր: մեզ անթիւ փաստեր առաջ բերել, ապացուցանելու համար մեր յայտնած միտքը, թէ մասնաւոր մարդու, ընտանիքի եւ ամբողջ ազգի վիճակը դաստիարակութիւնից է կախուած: Մենք միայն կը յիշենք մի քանի առ ձեռն փաստերը:

Ի՞նչն է ժողովրդին կարողութիւն տալիս պատերազմի դաշտերում փառաւոր յաղթութիւններ անելու եւ ուրիշ այնպիսիք, որոնք թէեւ առաջինի պէս այնքան ահարկու չեն, բայց առաւել նշանաւոր են աշխարհիս ասպարիզում: այսինքն արուեստի ու արգիւնագործութեան միջազգային աշխարհահասնութենքում: Մի խօսքով, ի՞նչին է պարտական ժողովուրդը, որ բարգաւաճում է եւ հարեւան ազգերից գերազանցում: Անկասկած իւր կրթողական հիմնարկութեանց

եւ ժողովրդական դպրոցների խոհեմ կազմակերպութեան: իւր վարժուհիների ու վարժապետների ընտիր խըմբաւորութեան: Ներկայումս սկըսում են համոզուիլ այս ճշմարտութեան մէջ. այս համոզումը ամենուրեք թափանցում է: Ազգերի կենսական սկզբունքներին առանց կանխակալ կարծիքների նայող մարդիկ՝ վաղուց արդէն որոշեցին, որ Պրուսացիք իրենց վերջին փառաւոր յաղթութեամբ իրենց լաւ կազմակերպուած ժողովրդական դպրոցներին են պարտական: «Յայտնի է, թէ ի՞նչպէս է պարծենում Պրուսիան իւր մանկավարժական հիմնարկութիւններով եւ սկըզբնական ուսուցման սխտեմայով: Մեզ հաւատացնում էին, որ Սաբօլայի յաղթութիւնը պըրուսացուց դպրոցական վարժապետներն են արել: Մինչեւ անգամ Բարձրագոյն Ղրան պետական անձինք հարկաւոր համարեցին պրուսացուց ուսուցանելու եղանակը մոցնել իրենց դպրոցներում» *):

1868 թուին միեւնոյն հեղինակը գրում էր հետեւեալը. «Երկու ազգեր, մինը յայնկոյս Բէյնի եւ միւսը Ատլանտեան օվկիանոսի, ներկայումս ապացուցանում են աշխարհքին, թէ ի՞նչ կարող է անել լսուսուսութեամբ: Առաջինն է՝ Պրուսիան» *):

*) D' Henriet. Revue des Deux mondes. Յունվարի 1 ին 1866 թ.

929 / 111
252 753 - 2010



Հազիւ ծնուած եւ իբրեւ դիւթական զօրութեամբ առաջնակարգ տէրութեանց կարգն անցած, — միւսը Միացեալ Նահանգների մեծ Հասարակապետութիւնը»: Նոյն այս Հեղինակը 1868 թ. սեպ 21-ին Անգլիայի մասին ասում է հետեւեալը. «Անգլիացւոց ապրանքների վաճարահանելու տեղերը նուազեցան. այս հանգամանքը Անգլիան իւր նկարչական ուսումնարանների անբաւարար դրութեանն է վերաբերում»:

Եւ յիրաւի, հէնց որ դպրոցները նոր կազմակերպուեցան, երկրի արդիւնագործութիւնը այն աստիճան բարձրացաւ, որ բոլոր ենթագործութեանց ու ակնկալութեանց գերազանցեց:



Բաւական է խաբուսիկ յոյսերով ապրել. ինչ յատկութիւններ ցանկանում ենք, որ մեր սերունդն ունենայ ապագայում: այդ բոլորը կանխօրէն պէտք է նախապատրաստենք դաստիարակութեամբ: Միայն այս կերպով կարող ենք մեր յաջորդող նոր սերնդին այն սերմերը տալ, որոնք թէ եւ դանդաղ, բայց հաստատ են զարգանում: Շօտլանդացւոց ներկայ լուսաւորութիւնն ու բարօրութիւնը կանոնաւոր եւ լաւ կազմակերպուած դպրոցներից են սկիզբն առնում: Այս դիպուածում Շօտլանդիան հիանալի օրինակ է ներկայացնում թէ ի՞նչ ազդեցութիւն

ունի լուսաւորութիւնը ժողովրդի վերայ: Լաբուէն (E. de Lavelye) այսպէս է նկարագրում դաստիարակութեան արած փոփոխութիւնը Շօտլանդացւոց վերայ: «Բնութիւնն առատ չք վարձատրեց այս ժողովրդին. Շօտլանդիայի հողը անբերրի եւ ժայռոտ է. կլիման այնպէս ցուրտ է եւ խոնաւ, որ պտուղները չէին կարողանում հասունանալ եւ գիւղատնտեսական միակ բոյսը վարսակն էր, որը ընդամին կիսավայրենի բնակիչների գլխաւոր կերակուրն էր: Կոպիտ, սնուտի ապաշտ եւ վայրենի լեռնականները զբաղուած էին անընդհատ յարձակումներով: Նոքա հովիտների խաղաղ եւ արդիւնաբեր ժողովրդի արդար վաստակը յափշտակելով էին ապրում: Ահա այսպէս էր շօտլանդական ժողովուրդը տասնեօթերորդ դարու վերջը: Հարիւր տարուց յետոյ ամեն ինչ փոխուեց: Այս անբերրի երկրում, որը այժմն մեծ հոգացողութեամբ մշակում է, բնակվում է մի ժողովուրդ, որը յայտնի է իւր բարոյականութեամբ, բարօրութեամբ, կրօնական ջերմեռանդութեամբ, խղճի ազատութեամբ ու լուսաւորութեամբ. վերջին դիպուածում մինչեւ անգամ անգլիացիներին գերազանցելով, որոնք առաջ շօտլանդացւոց իբրեւ բարբարոսների արհամարում էին. իսկ ներկայումս Շօտլանդացիք արդիւնագործութեամբ եւ վաճառականութեամբ Անգլիացւոց հետ համահասար են, իսկ երկրա-

գործութեամբ մինչեւ անգամ գերազանցում են նոցա»։ *)

Նօտլանդիայի սկզբնական դաստիարակութեան մասին խօսելիս, Բիօ իւր հեղինակութեան մէջ, ի միջի այլոց, ասում է. «Ամենուրեք, ուր որ երեւայ ծխական (paraфiальная школа) դպրոցում՝ դաստիարակուած շօտլանդացին, նորան իսկոյն կարելի է ճանաչել հայեացքների առանձին ուղղութեամբ եւ մտաւոր շրջահայեացի ընդարձակութեամբ, որը միջոց է տալիս նորան իւր հայեացքները այն նեղ շրջանից աւելի հեռու տարածելու, որով բաւականանում են մինչեւ անգամ մի եւ նոյն հասարակական գիրք ունեցող մարդիկ, բայց որոնք նոյն տեսակ դաստիարակութիւն չեն ստացել»։

Պատմաբան Մակօլէին ասում է թէ. XVII-դ դարում Լօնդօնում շօտլանդացւոց վերայ, էսկիմօսների պէս էին նայում. իսկ XVIII-դ դարու շօտլանդացւոց վերայ արդէն ճշ թէ արհամարանօք, այլ ընդհակառակն, նախանձով էին նայում, գանգատուելով որ նոքա ամենուրեք սկսում են առաջին տեղը բռնել։ Նօտլանդացիին անգլիացու կամ իրլանդացու հետ մրցելիս, միշտ գերազանցում է նոցա։ Եւ այս բոլորը կա-

*) d' Henriet. Revue des Deux mondes. Սեպ. 1-ին 1866 թ.

նոնաւոր կաղմակերպուած դպրոցների ազդեցութեան շնորհիւ է, որոնք տարածուած են ամբողջ երկրում, Էդինբուրգի պարլամենտի վճռի համաձայն՝ օրը ազգային լուսաւորութեան օգուտը Անգլիայիցվաղ ճանաչեց»։

«Պէտք է կոյր լինես, ասում է Լաբուլէն, որ չը կարողանաս տեսնել, թէ երկրի ողջ ապագան ազգի լուսաւորութեան աստիճանից է կախուած։ Յիշեցէք Բէկօնի դարմանալի ճիշտ խօսքը, թէ. «Գիտութիւնը ոյժ է»։ Այս անհերքելի ճշմարտութիւն է, մանաւանդ անտեսագիտութեան վերաբերութեամբ...։ Ապագայում այն ազգն աւելի հարուստ, հետեւապէս եւ աւելի հզօր կը լինի, որը գիտութեան մեծ պաշարը աշխատանքի հետ կը կցորդի» *) Սորան անհրաժեշտ է աւելացնել, եւ որը իւր բարոյական կանոններից չի շեղուել։

2.

Մի նշանաւոր հոգեւորական, նոյն առարկայի մասին ասում է. «Ազգերը կ'անհետանան, եթէ դեռ էլի երկար ժամանակ անուշադիր կը թողնեն երիտասարդների դաստիարակութիւնը»։ **)

Պլուտարքոսը միշտ եւ հանապազ դաստիարակութեան օգուտն էր բացատրում ժողովրդի

*) Revue des Deux mondes. Նոյեմ. 15-ին 1865 թ.
**) M-gr Dupanloup de l'education. intr. XXV.

բարգաւաճման համար: Լիկուրգոսին Նումայի հետ համեմատելով: նա զարմանալի պարզ կերպով զարգացնում է այս գաղափարը, «Երգումն, ասում է նա, սաստիկ վատ կը միացնէր սպարտացիներին: Եթէ որ դաստիարակութիւնը և կարգապահութիւնը չը սովորեցնէին նոցա մանուկներին իրենց օրէնքները պահպանելու և եթէ նոցա մանուկները ճօր կախի հետ միասին չը ճաշակէին յարգանքը դէպի սրբային հիմար. կութիւնները. եւ այս պատճառաւ էլ Լիկուրգոսի օրէնքները անփոփոխ պահպանուեցան հինգ դարուց աւելի: Բոլորովին սորա հակառակ, Նումայի մահուամբ անհետացան եւ նորա կառավարութեան արդիւնքները: անյայտացաւ Հռոմում նորա կենդանութեան ժամանակ թագաւորող սէրն ու խաղաղութիւնը: Նա մեռաւ թէ չէ, խուկոյն հռչակաւոր տաճարի երկու դռները: որոնք նորա ժամանակ միշտ փակած էին, եւ որոց յետեւը, այդպէս ասել, արգելել էր պատերազմի չար դելին: անյապաղ բացուեցան: Ողջ Իտալիան սարսափելի արիւնհեղութեան ու յափշտակութեան ասպարէզ դարձաւ: Եւ այսպէսով այս գեղեցիկ եւ արքայադասութիւնը չը կարողացաւ երկարատեւ գոյութիւն ունենալ որովհետեւ երկարատեւ դաստիարակութեան վերայ չէր հիմնուած» *):

Կասկած չը կայ, որ ամեն ճշմարիտ բարգաւաճման հիմքը, ինչպէս մասնաւոր անհատի,

*) Պլուտարխ. «Երեւելի մարդիկ»

նոյնպէս եւ ըտանիքի եւ ամբողջ տէրութեան, դաստիարակութիւնն է»: Պարզ բան չէ, ասում է դաստիարակութեան խնդիրները կանոնաւորապէս ուսումնասիրող մարդը, որ մանուկները տէրութեան համար ծառի ընի տեղն են բռնում. որոնք նորա նորոգման ու յարատեւութեանն են նպաստում: Միթէ դոցանից չեն յառաջանում բոլոր ընտանեաց հայրերը, բոլոր աստիճանաւորները, բոլոր նախարարները. մի խօսքով՝ տէրութեան մէջ բոլոր կշիռ ու նշանակութիւն ունեցող անձինք: Բայց միթէ սուտ է, որ այս անձանց լաւ եւ վատ դաստիարակութիւնը ազդում է տէրութեան ամբողջ կազմակերպութեան վերայ եւ ողջ ազգի հոգու եւ բնաւորութեան վերայ իւր կնիքն է դրօշմում: Այս պատճառաւ էլ Լիկուրգոսը, Պլատօնը, Արիստոտէլը, եւ առ հասարակ անցեալի բոլոր մեծ պետական անձինք պնդում էին, թէ իւրաքանչիւր աստիճանաւորի, նախարարի, օրէնսգէտի եւ թագաւորի էական եւ սեպուհ պարտաւորութիւնը պէտք է լինի կանոնաւոր դաստիարակութեան մասին հոգալ...» *)

Ապա ուրեմն այն անձինք, որոնք ցանկանում են իւրեանց հայրենիքին ճշմարիտ էական օգուտ բերել, իրենց բոլոր ճիգն ու ուշադրութիւնը դաստիարակութեան, եւ նա մասնաւոր ուղիքիս համար դաստիարակութեան պիտի նուիրեն:

*) Բօլէս. Traité des études. liv. VIII.

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Գաստիարակոթեան մի ճիւղ, որը բաւականաչափ ուշադրութիւն չէ զարճուցել իւր վերայ:—Ե՛րբ պէտք է սկսել մանկան գաստիարակոթիւնը:—Ինչպէս է զարգանում մանուկը ծննդեան առաջին օրերից սկսած: Առաջին տպաւորութեանց ոյժը:—Մանկան շրջապատող բոլոր անձինքն ու առարկաները միշտ եւ հաճապազ ընտրելագոյն պիտի լինին:—

Ա.

Ներկայումս բոլոր մտածող մարդոց զբաղեցնում է ազգային գաստիարակոթեան հարցը՝ բայց մեզ թւում է, թէ այս գործի մի կողմը դեռ եւս կարեւոր ուշադրութիւն չի դարձրել իւր վերայ: Ազգային լուսաւորութեան վերայ խօսելիս, չի կարելի միայն երիտասարդաց գաստիարակոթեան վերայ կանգ առնել, այլ պէտք է աւելի հեռու գնալ՝ այլապէս՝ եթէ դուք ցանկանում էք մարդիկ պատրաստել, բառիս բուն նը-

շանակութեամբ, դուք անպատճառ մանկան գաստիարակոթեամբ նորա ծնուելու օրից պիտի զբաղուիք: Երբեմնապէս այս հարցին դառնալիս, մեզ միշտ թւում է, թէ Տակիդոսը գերեզմանից պիտի վերկենայ եւ կրկնէ իւր ճարտարահիւս խօսքը, որով նա դիմեց Կայսրութեան անկման ժամանակի Հռոմայեցիներին: «Նախ եւ առաջ կը պատմեմ, թէ ինչպէս էին մեր նախահայրերը իրենց որդւոցը գաստիարակում: Պատուաւոր մօրից ծնած որդուն չէին յանձնում օտար տնից վարձուած ծծմօրը, այլ մայրական գրկի մէջ իւր խանդաղակով ստինքով սնուցանում էր նորան հարազատ մայրը, որի միակ առաքինութիւնը դէպի հայրենի օջախն ունեցած եռանդն ու անձնուիրութիւնն էր: Բացի սորանից, պարկեշտասուն վարք ու բարքով յայտնի հասակաւոր ազգական կանանցից մինին յանձնվում էր տան մէջ մանկանց վերահսկողութիւնը. նորա ներկայութեամբ թոյլ չէր տրվում որեւէ անվայել բան խօսել, կամ մի այնպիսի բան անել, որ պատուի գաղափարին հակառակ էր: Նա ո՛չ միայն ուսուցման եւ զբաղմունքների, այլ մինչեւ անգամ երեխայոց խաղերի ու զուարճութեանց վերայ էր հսկում: Այսպէս էին գաստիարակում իրենց որդոցը Քրակզերի մայր Կօրնէլիան, Կեսարի մայր Աւրէլիան եւ Օգոստոսի մայր Ացիան, եւ այսպիսով նոցա հռչակաւոր անձինք

գարձրին: Ապագայում երբ այդ ազնիւ, խիստ կարգապահութեամբ սնուած ուղղասիրտ երիտասարդները՝ որ ճշմարիտ շաւղից չէին շեղվում եւ ախտերով վարակվում: սկսումէին իրանց ընդունակութեանց համաձայն ազատ գիտութիւններ ուսումնասիրել, նուիրելով իրենց կամ ռազմագիտական արուեստին, կամ օրէնագիտութեան, կամ հռետորութեան, նոքա հոգւոյ բոլոր զօրութեամբ էին զբաղում եւ գիտութեան բոլոր գանձերը սպառում: Իսկ այժմ, երեխան ծնում է թէ ո՛չ, իսկոյն մի որեւ է յոյն ստրկուհու են յանձնում: նրան օգնական տալով մի գործին բոլորովին անընդունակ ստրուկ: Այդպիսի առաջնորդութեամբ այս քնքոյշ եւ զգայուն էակները իրենց գլուխը սնոտիպաշտ հեքիաթներով ու նախապաշարմունքներով են լըցնում: Ամբողջ տան մէջ չը կայ մինը, որ հոգար թէ մատաղահաս մանկան ներկայութեամբ ի՞նչ են ասում եւ ի՞նչ անում.» *)

Բ

Մենք դրականապէս հաստատումենք, որ մանկան սկզբնական դաստիարակութիւնը հէնց այն օրից պիտի սկսուի, երբ մանուկն աշխարհ է

*) Դիտողութիւններ XXVII և XIX դարուց հռետորների մասին:

գալիս. կամ աւելի ճիշտ ասել այն ժամանակից՝ երբ նա արդէն յղացել է մօր յարգանդում: Յղանալուց յետոյ, մանուկն ընդունումէ բոլոր այն կենսական գործողութեանց տպաւորութիւնները, որպիսիք պատահում են մօրը: Մօր ընդունած եւ արեան փոխարկուած կերակուրը, սնուցանում է նոյնպէս եւ մանկանը. այսպէս էլ մօր արտաքին աշխարհից ստացած տպաւորութիւնները ներգործում են նոյնպէս եւ նորա բերքի վերայ:

Երեխան լոյս աշխարհ եկաւ թէ չէ, բոլոր նրան շրջապատող առարկաները լաւ կամ վատ տպաւորութիւն են անում նորա վերայ:

Մի քանի շաբաթից յետոյ, նայեցէք այս թոյլ արարածին ծծմօր գրկում. նայեցէք նորան սիրալիր ժպիտով եւ դուք կը տեսնէք որ նորա դէմքը աշխուժանում ու փայլումէ, նա ձեր փաղաքշաքին հրաշալի ժպիտով կը պատասխանի. նա ամբողջապէս գոհունակութիւն կ'արտայայտէ: Կարելի է ասել, որ այս բոպէական մագնիսական ազդեցութիւնը նորան երջանկացնումէ. կարելի է հաստատապէս ասել, որ այդպիսի ազդեցութիւնը յաճախ կրկնուելով, մանկանը բարի է դարձնում:

Եւ ընդհակառակն՝ մանկան վերայ մռայլ ու խոժոռած դէմքով նայեցէք, նորա հայեացքը մռայլանումէ. դէմքի գծագրութիւնները

կնճռոտութիւնս եւ աչքերից արտասուք է թափում: Նորա դատապարտուած փոքրիկ գոյութիւնը իւրեան մէջ թագչում ու կենդրոնանում է: Յաճախ կամ անընդհատ կրկնող այդպիսի ազդեցութեամբ մանուկն անճոռնի: Խորամանկ, եսական ու չարահոգի է դառնում:

Լինում են այնպիսի մարդիկ, որոնք առաջին հայեացքից արդէն գրաւիչ են դառնում: կարծես թէ վաղուց նոցա ճանաչու մեծ նոցա վարվիր բացայայտ, խոնարհամիտ, սիրալիր ու բարի է. կարծես թէ նոքա բարութեան աստուածային ճառագայթով են լուսաւորուած. նոքա ցանկանում են ամենին ծառայել: Հաւատացէք, որ այս անձինք դեռահաս մանկութիւնից սկսած մայրական գործադրութիւն խնամքին էին յանձնուած. բարեպաշտ եւ համակրելի մարդկանցով շրջապատուած, որոնք նորա սրտում բարի զգացմունքների արմատներ ձգելով, տարեցտարի աճեցրին եւ նորա գոյութեան անբաժան մասը դարձրին: Այսպիսի մարդոց լոկ միայն ներկայութիւնը փրկարար ներգործութիւն ունի ամենիս վերայ:

Եւ ընդհակառակն՝ այնպիսի մարդիկ էլ են լինում: որոնք գուցէ եւ շատ բարի են, բայց առաջին անգամից համակրութիւն չեն զարթեցնում: նոցա հայեացքը սրտից չէ բխում եւ սրտի վերայ չի ազդում: նոցա վարքը

չի գրաւում եւ չի արամադրում ձեզ նոցա օգտին: Նոքա սառնասրտութիւն եւ մինչեւ անգամ արհամարհանք են գրգռում: Հաւատացած եղէք, որ մատաղ հասակում սիրալիր ժպիտները չեն քաղցրացրել նոցա կեանքը: Խիստ վարվիր, անընդհատ կշտամբանքը եւ մռայլոտ դէմքը ճնշեցին այն ամենը, ինչ պէտք էր խրախուսել: Եւ եթէ այդպիսիք սրտով դեռ եւս բարի են, նոքա կարող էին առաւել լաւ լինել, եթէ առաւել բարեկարգ հասարակութեան մէջ սնուէին:



Մատաղ հասակում մանկան հոգին ու մարմինը ամեն տպաւորութիւն ընդունում է: Մինչեւ անգամ նա, ով այս առարկան ուսումնասիրել է, չի կարող երեւակայել, թէ ի՞նչ մեծ նշանակութիւն ունի մանկան սկզբնական, մանաւանդ մայրական դաստիարակութիւնը: Փայփայանքը, քաղրահայեաց ժպիտները բարերար ներգործութիւն են ունենում մանկան վերայ այս ներգործութիւնը թափանցում: զարթեցնում եւ կենդանացնում է քնքոյշ մանկան ողջ գոյութիւնը: Ընդհակառակն՝ վարձուած ծծմօր համբոյրները, հայեացքներն ու ժպիտները չոր ու ցամաք են. նոքա չեն սփոփում մանկան

վշտերը, չեն հաղորդում նորան սէր եւ գուլթ, չեն ստեղծում նորա համար այն հոգեկան կեցուցութիւնը, որը միայն մայրը կարող է տալ: Օտարի փաղաքշանքն ու համբոյրները աւելի շուտ խանգարում: քան նպաստում են գեղեցիկ յատկութեանց զարգանալուն: որը տպաւորել է բնութիւնը մանկանց սրտում: նոքա միայն քրնքոյշ մօր հոգացողութեամբ կաճեն:

Որպէս զի իմանանք, թէ ի՞նչ մեծ ազդեցութիւն կարող է ունենալ մայրը իւր մանկան վերայ՝ բաւական է միայն յիշել, որ այս թոյլ արարածները ընդունակ են նեարդային ցնցումների եւ առ հասարակ նեարդային հիւանդութեանց ենթարկվելու. լոկ այս հիւանդութեանց նմանելով, կամ թէ չէ այսպիսիք ուրիշների վերայ տեսնելով: Այս բանի համար մենք կարող ենք որքան հետաքրքիր, նոյնքան եւ խրատական փաստեր առաջ բերել: Բայց եթէ այդքան հզօր է բնագիտական ազդեցութիւնը, որ լոկ միայն իւր ներկայութեամբ կարող է գրգռել եւ ազդել մի բոլորովին օտար կազմուածքի վերայ, ապա ուրեմն որքան մեծ ներգործութիւն պիտի ունենայ մայրը իւր մանկան վերայ: *).

*) Այս հետաքրքիր ազդեցութեանց բացատրութիւնները ընթերցողք կը գտնեն մեր այս շարադրութեան մէջ. «Սեանքի օրէնքները և մարդու օրերը

Պ.

Մեր այս գործի վերայ ունեցած հայեացքը անթիւ փաստերով հաստատոււմէ: Կասկած չը կայ, որ մանկանց մէջ ցոլանում է նոցա շրջապատող կենցաղաւարութիւնը, եւ որ նոքա այն անձանց ձեւերը, ճաշակն ու սովորութիւններն են ձեռք բերում: որոց հետ անընդհատ հաղորդակցվում են: Մի անգամ իմ այս մտքերը ծանօթներիցս մինին հաղորդում էի:

«Լսիր, ասաց նա ինձ, մատնացոյց անելով իւր փոքրիկ դստեր վերայ, իրաւացի չէ՞, որ նա խիստ նման է այն մեր ազգական տիկնոջ, որը նորան սնուցել ու դաստիարակել է: Տեսէ՞ք նորա մանգալը՝ վարուելը, ձեւերն ու շարժուածքները, նորա հայեացքն ու ժպիտը եւ առ հասարակ նորա դէմքը: Զը նայելով, որ դէմքի գծագրութիւնները բոլորովին տարբեր են, սակայն մկնակների տրամադրութեան եւ խաղի մէջ մի ինչ որ նեարդային սովորութիւններ կան, որոնք նորա դաստիարակչուհու դէմք են յիշեցնում»: Եւ յիրաւի որ նորա ասածը զուտ ճշմարտութիւն էր: Պէտք է միայն խորազննին աչքով նայել, եւ ամեն բոպէ դիտել այդ տեսակ

յարատեւելու արհեստ» հրատարակ. պ. պ. Ֆէրմեն Գիդոյի. նոյինպէս և Correspondan—ի մէջ 1870 թ. Յուլիսի 10-ից:

կակուղ եւ ճկուն են, իսկ անդամները չափազանց տրամադիր դէպի զգածութիւնը: որը տարէցտարի անհետանումէ:

Մանկական հասակում մարմնի բոլոր անդամներն ու նեարդերը ենթարկւում են հոգւոյ ամենափոքր շարժողութեանցն անգամ: Ազնիւ բնազդումները, ողջամիտ բանականութիւնը եւ վեհ զգացումները մարմնուն բոլորովին ուրիշ ուղղութիւն են տալիս եւ ուրիշ հետքեր ու տպաւորութիւններ են թողնում, քան կոպիտ բնազդումները, ազականուած միտքն ու ստոր կրքերը:

Այն տպաւորութիւնները, որոնք մարմնում մէջ մտքերով, բնազդումներով ու կրքերով են յառաջանում, գիւրութեամբ չեն ջնջւում. եւ որքան աւելի յաճախ են կրկնւում, այնքան առաւել խոր արմատ են ձգում: Փոքր առփոքր, նոքա բոլորովին բռնանում են հոգւոյ վերայ, հրապուրում են, եւ մի փոքր ընդգիմադրութիւնից յետոյ, տալիս են նորան այն բնազդումները, մտքերն ու զգացումները, որոնց արտայայտողքն իրենք են, եւ որոնք միեւնոյն հոգւոյ սկիզբն առան: Ահա այսպէս են կազմւում մարդու սովորութիւններն ու բնաւորութիւնը:

Ազատ հոգին կարող է մարտնչել այդ բռնութեան հետ: Նա կարող է կրկնակի ջանքերով փոխել իւր զարգացման ուղղութիւնը եւ ուրիշ

ճանապարհով ընթանալ: Բայց երբ մանկութիւնը կ'անցնի եւ պատանեկութիւնը առաջ կը գայ, երբ անդամներն արդէն բոլորովին կը կազմակերպուին ու կ'ամրապնդուին, այն ժամանակ արդէն շատ դժուար գրե՛ թէ անկարելի կը լինի առաջն առնել: Առաջին տպաւորութիւնները միշտ յաղթող կը լինին:

Իբրեւ մեր արտայայտած մտքերի տպացոյց, առաջ բերենք երեւելի բնագէտ Այօզ—

Բերնարի հեղինակութիւնից մի հատուած: «Ո՛չ միայն մեր արտաքին գործարանների շարժողութիւնքը խոր արմատ են բռնում, այլ եւ մեր մտաւոր շրջանն էլ նոյն օրէնքին է ենթարկուած: Երբ որեւէ միտք երկար ժամանակ թափառում է մեր ուղեղում, նա այնպէս խորն է տպաւորւում, կարծես թէ բնածին լինէր: Այս դիպուածում բնագէտն արդարացում է հռովմայեցի բանաստեղծի ոգեւորութիւնը, այն կարծիքի համաձայն թէ՛ մանկութեան հասակում զարգացող ուղեղը փափուկ մեղրամոմի նման ընդունակ է ամեն տեսակ ձեւ ստանալ, նոր պատուաստած ծառի ճիւղի նման: որը առաջուայ տուած ուղղութեամբ է աճում: Ապագայում, երբ մարմինն կ'ամրապնդուի, սովորութիւններն

ու գաղափարները այնպէս սաստիկ խոր արմատներ կը ձգեն, որ մենք արդէն անկարող կը լինենք միանգամից փոփոխելու կամ ոչնչացնելու առաջուայ հետքերը»: *)

Մանկական հասակը հալած մետաղի նման է: որը նայելով թէ ինչ ձեւի ամանի մէջն է ածուած, այն ձեւն էլ ստանում է: Բայց հէնց որ այդ հասակը կ'անցնի, մարդկային մետաղն ամրապնդւում է եւ նորան այլ եւս չի կարելի նորից հալել: այլ միայն կարելի է փոքր ինչ թրաշել:

«Մի՞թէ Մակեդոնացուց Փիլիպպոս արքան կը ցանկար» որ իւր որդին այն ժամանակուայ ամենաերեւելի փիլիսոփայ Արիստոտէլից գրել ուսանէր. եւ մի՞թէ վերջինս կը համաձայնէր այդպիսի ծանր պարտականութիւն յանձն առնել: Եթէ որ մէկը կամ միւսը համոզուած չը լինէին, թէ որքան մեծ նշանակութիւն ունիներկայի եւ ապագայի համար մանկան սկզբնական զարգացումը առաջնակարգ դաստիարակին յանձնել» **).

*) Փրանսիական Ակադեմիան մտած օրուայ կարգացած ճառը. 1860 թ. Մայիսի 27:

***) Quintilien. Inst. orat. I Գիրք:

Պ Գրող մամէլ որպէս բնամկտրամիտ յիմարտայիք մեծագամնս ոմե Դաստիարակութեան գործում կշիռ եւ նշանակութիւն ունեցող մարդու զարգացման օրէնքները ուսումնասիրող անձինք այս դիպուածում բոլորովին համաձայն են գիտութեան հետ եւ միաձայն ընդունում են, որ հէնց այն ժամանակ էրբ մանուկը դեռ եւս չէ իւրացրել որեւէ ֆիզիքական, բարոյական կամ մտաւոր սովորութիւններ, հէնց այն ժամանակ պէտք է այն բոլոր տպաւորութեանց սկիզբը դրուի, որոնք ժամանակով պիտի զարգանան եւ ամրապնդուին: Եւ այս պատճառաւ սկզբնական կրթութիւնն ու դաստիարակութիւնը յայտնի մեթօդի համաձայն, պէտք է արդէն մանկան կեանքի երկրորդ կամ երրորդ տարուց սկսուի: Այս սկզբնական դաստիարակութիւնը, հանգամանաց նայելով պէտք է մինչեւ 7-ը կամ 10 տարին շարունակուի:

Ակնյայտնի է, որ բոլոր դիպուածների համար չի կարելի որոշ ժամանակամիջոց նշանակել: Բայց առ հասարակ սկզբնական դաստիարակութիւնը այն ժամանակ կը սկսուի, երբ մանկան խելքը գործունէութեան նշոյլներ կ'արտայայտէ. իսկ այս բոպէն ենթադրածից աւելի վաղ է հասնում: Կլինտիլիանը, որը լաւ տեղեակ էր դաստի-

արակութեան բոլոր հարցերին, իրեն նախորդ ամենարեւելի փիլիսոփաների հեղինակութեանց վերայ յենլով, ասում է, որ մանուկը ծծմօր ձեռքին պէտք է միայն մինչեւ երեք տարեկան հասակը մնայ. իսկ այս ժամանակից սկսած, պէտք է արդէն մեթօդիքական դաստիարակութիւնն սկսել: Նա միայն սորանով էլ չի բաւականանում: այլ պահանջում է որ ստնտուք մինչեւ այս մատաղ հասակը ջանային ճնշել մանկանց մէջ կրքերի այն առաջին ցուցմունքները, որոնք աննկատելի կերպով կարող էին զարգանալ, եթէ նոյն իսկ սկզբից արմատախիլ չը լինէին: «Նատերը կարծում են, որ դաստիարակութիւնը եօթը տարեկանից վաղ չը պէտք է սկսուի, իբր այն պատճառաւ, թէ միայն այս հասակում մանկան ուշք ու միտքը այնքան զագացած են, որ թոյլատրում են ուսումն սկսելու...»: Բայց մենք, առանց երկար մտածելու, համաձայն ենք նոցա հետ, որոնք պահանջում են, որ մարդուս ո՛չ մէկ հասակը առանց դաստիարակութեան չը թողնուի: Աերջիներիս թւումն է Խրիզիպը, որը թէ եւ համաձայն է, որ մանուկը մինչեւ երեք տարեկան հասակը ստնտուի հոգատարութեան թողնուէր, բայց եւ այնպէս նոցանից պահանջում է, որ նոքա այս իսկ ժամանակ աշխատէին ցանկ իրենց սանիկների սրտերում առաքինութեանց բոլոր սերմերը: Ինչո՞ւ հոգույ զարգա

ցումը տեղի չը պէտք է ունենար մի այնպիսի հասակում, որը արդէն բարոյականութեանն է պատկանում»: *)

Նա աւելի հեռու է գնում. եւ պահանջում է որ ստնտուք բոլորովին կանոնաւոր լեզուով խօսէին, հակառակ դիպուածում մանկան մօտ անդադար մի կրթուած մարդ պիտի լինի, որը պարտաւորուէր սխալ հայեացքներն ուղղել, եւ չը թոյլ տալ անճիշտ դարձուածքներ, որպէս զի մանուկը վատ թճի արտայայտութիւնը չը սեփականէր, եւ յիմար նախապաշարմունքների զոհ չը դառնար»: Բայց եւ այնպէս, ասում է նա, եթէ անկարելի է այնպիսի ստնտու վարձել, որպիսին ես պահանջումեմ, այն ժամանակ կատարեալ անհրաժեշտ է մի կրթուած դաստիարակ ունենալ, որ միշտ կարողանար մանկան ներկայութեամբ ստնտուի արած սխալներն ուղղել: Միայն այսպիսով միջոց չեն ունենալ խիտերը արմատանալու»):**

Ֆենելօնը բոլորովին նոյն կարծիքի է « Այս վաղ հասակն, ասում է նա, որը սովորաբար անփորձ եւ երբեմն մինչեւ անգամ անբարոյական

*) Quintilien. I Գ/բբ. III Education des filles.
 (** Quintilien. I Գ/բբ. III Education des filles.

կանանցն են յանձնում, հէնց իսկ ամենազօրեղ տպաւորութեանց հասակն է»։*)

Հոչակաւոր հոգեւորականը աւելի հեռու է գնում։ «Մինչեւ անգամ աւելի վաղ, քան մանուկները կը սկսեն պարզ խօսել, կարելի է նոցա նախապատրաստել ուսուցման համար։ Գուցէ մի քանիսը կարծեն, որ ես չստիպազանցութեան եմ հասնում. բայց որպէս զի ասածիս ճշմարտութեան մէջ համոզուիք, հարկաւոր է միայն դիտել, թէ ինչ են անում անլեզու երեխաները»։ Ապա նա ամենահամոզեցուցիչ վկայութիւններ է բերում իւր հայեացքի ճշմարտութիւններն ապացուցանելու եւ յարակցումէ։ «Հաւաքացած կացէք, որ այս հասակում մանուկներն աւելի են հասկանում, քան թէ սովորաբար կարծում ենք։ Բաւական է միայն յիշել, թէ սրբան ուրխալի եւ կենդանի են մանկական հասակի սիրելի առարկաների յիշատակները հասակաւոր մարդոց համար»։**)

Նոյնը, բայց ուրիշ խօսքերով, ասում է եւ պ. էմէ—Մարտէնը։ «Օրօրոցում ստացած տպաւորութիւնները երբէք չեն ջնջուի յիշողութիւնից. ծերունիք ապացուցանում են, որ առաջին

*) Education des filles. III Գլուխ։ I

**) Education des filles. III Գլուխ։ II

տպաւորութիւնները նոցա վերջին յիշատակներն են լինում»։*)

Այդպէս ուրեմն, բարոյական, ինչպէս նա եւ մտաւոր սովորութիւնները նոյն միջոցին եւ նոյն դիւրութեամբ են ձեռք բերում։ Ամենին յայտնի է, որ հասակն առած ժամանակ ստացած սովորութիւններից դեռ էլի կարելի է ազատուիլ. իսկ մանկական սովորութիւններից գրեթէ անկարելի է. միայն կարելի է մարտնչել նոցա դէմ։ Բայց հակումն միշտ մնում է։ Մանուկ հասակում ստացած սովորութիւնները այն ճիւղի նման են, որը աճման սկզբից է թեքուած։ Նորան կարելի է մի առ ժամանակ ուղղել, բայց անկարելի է առաջուան ուղղութիւնն ստանալու հակումն ջնջել։

Ե.

Փիլիսոփաները միշտ այս ճշմարտութիւնը ապացուցել են։

«Այն, ինչ որ բարոյական մտքով մարդ են անուանում, կարող է տաս տարեկան հասակում ձեւակերպուիլ։ Եթէ մանուկը իւր մօր գրկում չէ մեծացել, նորա համար այդ

*) Education des mères de famille. III Գլուխ։

շատ մեծ դժբաղտութիւն է: Ա՛յի՛նչ քան չի կարող մայրական դաստիարակութեան տեղը բռնել: Կիտիին կարելի է հաւատացած լինել, որ ախտերը չեն կարողանում կատարելապէս տիրապետել այն մարդոց, որոնք այնպիսի մայր ունենալու բազմ են ունեցել, որը իւր սրբազան պարտականութիւնն է համարել որդու հոգում նորա ծագման ու տոհմի կրակը վառել: Կասկած չը կայ, որ երիտասարդը կարող է մի առ ժամանակ ճշմարիտ շաւղից շեղվելու, բայց նա միշտ այն աղբիւրին կը դառնայ, որից ուղղութիւն էր ստացել»:^{*})

Իսկոր յայտնի իրողութիւնները հետեւեալ դիտողութիւնն են հաստատում: Կարծես թէ տարէցտարի պիտի մոռացութեան տրուէին մանուկ հասակի ամենահեռաւոր յիշատակները. իսկ փորձով այլ է երեւում: Մարդս ծերութեան պատճառաւ կրկին մանկանալով, կարող է մոռանալ, ինչ նորան պատահել էր մի քանի ամիս, մի քանի շաբաթ, մի քանի օր առաջ. մինչեւ անգամ երեկուայ անցքը. բայց նա շատ լաւ է յիշում, թէ ի՞նչ է պատահել նորան մանկութեան ժամանակ, երբ նա երեք, չորս կամ հինգ տարեկան էր: «Ահա՛ այսպիսի զօ-

րութիւն ունին մեր առաջին մանկական սովորութիւնները (Ախրգիլիոս)»: Այս հասակում ամեն ինչ խոր եւ անդրդուելի արմատներ է ձգում, որոնք նոյնքան տոկուն են, որքան մարդու մարմինը:

Ապա՛ ուրեմն նա, ով որ այս հասակից չէ օգտվում հաղորդելու մարդուն այն ամենը, ինչ լաւն է, ճշմարիտը, գեղեցիկն ու բարին, — շատ մեծ յանցանք է գործում:



[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]

^{*}) Soirées de Saint—Petersbourg. 3-րդ Զրոյց.

անձրեւը եւ մինչեւ անգամ բնութեան բո-
լոր երեւոյթները նորա աչքի ընկնող զանա-
զանակերպ առարկաները գրաւում ու գրգռում
են նորա հետաքրքրութիւնը մանկան խօ-
սակցութեանց ու հարցերին անվերջ նիւթ մա-
տակարարելով:

Ահա հէնց սոքա են բնութեան առաջին
դասերը մտաւոր ընդունակութեանց առաջին
նշոյլները որոնք զարգացումն են պահանջում:
Բայց փոխանակ խրախուսելու եւ օգնւտ քաղե-
լու մանկան այս առաջին ձրգտումներից ի՞նչ
են անում սովորաբար:

Սկզբում նորա հարցերին անորոշ ու պ-
ռանց բացադրելու են պատասխանում: Եւ ապա
շուտով համբերութիւնը կորցնում եւ հեռաց-
նում են նորան ասելով որ նա չափազանց հե-
տաքրքիր է, որ նա ձանձրացնում է. որ նա
այդ բաները յետոյ կը սովորի, երբ կը մեծանայ
եւ երբ նորան դըպրոց կ'ուղարկեն:

Այն ինչ խեղճ մանկանը այդպէս հեշտ չէ
հանդարտացնել. նա նորից կը սկսի հարցեր ա-
ռաջարկել, մինչեւ որ բոլորովին չեն ճնշի նորա-
նում այս բնական պահանջը:

Այն ժամանակ մանուկը որի բնական ձրգ-
տումներին հակառակումէին, դիտողութեան
ընդունակութիւնը կորցնում եւ բոլորովին դա-
դարում է հարց ու փորձ անելուց. կամ թէ

երբեմնապէս հատ ու կտոր բաներ է հարցնում,
այս ժամանակից սկսած, նորան ոչինչ չէ հետա-
քրքրում. նորա ընդունակութիւնները թառա-
մում ու հանգչում են. բայց որովհետեւ մա-
նուկը ինչ եւ իցէ պէտք է գործէ, նորա գոր-
ծունէութիւնը ակամայ անկարգ, պտտահալան
է լինում եւ առաւելագէս զգայականութեան
վերայ է ազդում: «Մանկան հետաքրքրութիւնը
ասում է Լոկը, գիտութիւն ձեռք բերելու ցան-
կութիւնն է: Խրախուսեցէք այդ ցանկութիւնը
ոչ միայն իբրեւ բարեպատէհ նշան, այլ իբրեւ
ամենաէական միջոց, որով բնութիւնը վարձատրել
է մանուկներին. որովէս զի ազատէր մանուկ-
ներին բնական տգիտութիւնից, որը առանց
այս անհանգիստ հետաքրքրութեան, յիմար եւ
վնասակար արարածներ կը դարձնէր նոցա» (*):

Անհնարին է երեւակայել, թէ այդպիսի մա-
նուկը ի՞նչ անդառնալի կորուստ է ապագայի
համար:

Մանկան հոգեկան ձգտումները չը խրա-
խուսելով, ծնողները ընդհատում են նորա ըն-
դունակութեանց զարգացումը եւ խեղդում բնա-

*) «Խորհրդածութիւններ Դաստիարակութեան մա-
սին»:

կան օրէնքների նշոյները, բացի սորանից, մանկան հասակն առնելուն պէս, նորա այս ձրգտումների ու օրէնքների հակառակ են գործում:

Ապա խեղճ մանկան ուղարկումեն ուսումնարան, ուր նորան, առանց նախապատրաստութեան, առանց սկզբնական զարգացման, գրատախտակի մօտ են կանգնեցնում, ուր գրում են տառեր եւ ուրիշ պայմանական նշաններ, որոնք նորա սրտին ու մտքին ոչինչ չեն ասում. նորան ստիպումեն անգիր սերտել այն, ինչ ատելով ատումէ. այս հանգամանքը դեռ նորա բնական օրէնքների թանկագին յայտարարն է, որը ներքին բնազգամբ այն բոլորին հակառակում է, ինչ նորա բնական ձիրքերի զարգացման խոչընդոտն է: Ասկայն այս գանգատի վերայ ոչ ոք ուշք չէ դարձնում:

Ուժով եւ պատիժներով ստիպումեն մանկան անգիր անել տառերի անունները, նոցա կապկպել, մի քանի խօսքեր կազմել, եւ մի քանի այնպիսի նախադասութիւններ կարդալ, որոց նա չի հասկանում: Այդ տեսակ ուսումը սովորեցնումէ նորան միայն խօսքերով բաւականանալ, առանց նոցա իմաստն ըմբռնելու, եւ բոլորովին մեռցնումէ նորանում ծանր աշխատանքի ու հետազօտութեանց աշխոյժը. միով բանիւ, այս եղանակով խանգարվում է նորա մտա-

ւոր ընդունակութեանց տրամաբանական զարգացումը:

Մօտէնը շատ իրաւացի է սարսափում այս փաստերից: «Մենք տեսնումենք, ասումէ նա, թէ ի՞նչպէս սիրելի ու խելօք են ծրանօտացւոց մանուկները, բայց սովորաբար նորա չեն արդարացնում իրենց վերայ ունեցած մեծ յոյսերը եւ հասակն առնելով, նշանաւոր առաքինութեանց տէր չեն դառնում: Հասկացող մարդիկն ինձ ասումէին, որ նորա այն բազմաթիւ կօլլէջներումն են փչանում, որոնցով այնքան առատ է ծրանօտան»: *) Պ. Բլանշարը, այս տողերն առաջ բերելով, յարակցումէ. «Շատ մանուկներ սիրումեն գններ, իմանալ, եւ իրենց ուշագրութիւնը շրջապատող առարկաների վերայ դարձնել. բայց փոխանակ օգտուելու եւ ամեն կերպ խրախուսելու այս գեղեցիկ ձգտումները, մենք, ընդհակառակն, աշխատումենք դոցա ճնշել, որպէս զի դոցա փոխարէն երեխայոց գլուխը բառերով ու ֆրազներով լցնենք»: *)

Ե. Տեսէք, թէ այնուհետեւ ի՞նչպէս են վարվում մանկան հետ եւ դուք կը սարսափէք:

*) Revue des deux Mondes 15 204. 1871. Թ.

— Կո ի մի միտմանս զանո՞ մանրութեանս մասինն
 միտաբանս՝ քնն յս քննմանս մասինն և ասիտ
 ըստ ի մարմնաբան զո մասում ի մարմնաբանս
 ստանիցո ըստ ոմ յս մարմնաբանս միայն զի
 և տեսիլ ի միտաբանս
 — ասի միտաբանս զո զի մտածո՞ քննացան
 — ոյ ի ներս մտնին մազ բնական զպիս սիս
 — ասի միտաբանս զմտածոնս
 — ասի միտաբանս զմտածոնս

ՔԻՆԳԵՐՈՐԳԻ ԳԼՈՒԽ.

Մտաւոր ընդունակութեանց զարգացումը:— Եւրօյ առաջին նշոյլ-
 ները:— Հակումն, որը պէտք է խրախուսել:— Ի՞նչպէս պէտք է օգ-
 տուիլ բնութեան խրատները:— Պատկերների նշանակութիւնը
 սկզբնական կրթութեան դրժումը:— Ի՞նչպէս հնարաւոր էր բնու-
 թեան մէջ զտնուած առարկաները ձեռքի տակ ունենալ, եւ
 ցանկացածի պէս բնական երեւոյթներն արտադրել:— Փորրիկ ման-
 կան դասը:— Ի՞նչպէս հնարաւոր էր այս դասը անվերջ շարու-
 նակել, չը յօգնեցնելով մանկան ուշադրութիւնը:— Ի՞նչպէս են ցան-
 վում գիտութեանց սերմերը, որոնք պէտք է անընդհատ եւ անզ-
 գայաբար զարգանան:

Ա.

Երբ մանուկն հազիւ թէ սկսում է թօթովել
 եւ իւր ուշադրութիւնը շրջապատող առարկա-
 ների վերայ կենդրոնացնել, նորա խելքն էլ նոյն-
 պէս սկսում է գործել: Մանուկն անդադար հարց
 ու փորձ է անում, ամեն ինչ նորան հետաքրք-
 րում է. նա կամենում է ամեն ինչ իմանալ եւ ա-
 մենը զննել: Բոյսերը, կենդանիքը, օդերեւոյթներն

*) ու աստղերը՝— ամենքը նորան գրավում են:
 Նա հարցնում է այս ու այն առարկայի մասին,
 նոցանից ստացած տպաւորութեանց կարգով:

Այս ձգտումները պէտք է խրախուսել, տարով
 երեխային պահանջած բացատրութիւնները, դիւ-
 րամբունելի ոճով հասկացնելով նորան. Ահա սորա-
 նում է կայանում մայրական դատտիարակու-
 թեան առաջին եւ հաստատագոյն հիմունքը:

Մանուկը տեսնում է առարկաները, զննում
 է նոցա եւ տեղեկութիւններ է հաւաքում նոցա
 մասին: Եթէ այս դիպուածում կը ղեկավարեն նո-
 րան, կը խրախուսեն եւ նորա առաջարկած հար-
 ցերին պարզ ու հասարակ ոճով կը պատասխա-
 նեն, նա կը իւրացնէ դորանով անթիւ օգտա-
 կար եւ գործնական կեանքի համար անհրաժեշտ
 տեղեկութիւններ: Բայց որ գլխաւորն է, այս կեր-
 պով նորա մտաւոր ընդունակութիւնները արա-
 գութեամբ են զարգանում. մանուկը սովորում
 է գիտակցաբար դիտել, կանոնաւորապէս մտա-
 ծել եւ առարկաների մասին իւր անկախ համոզ-
 մունքները կազմել: Այս ամենը առանց ստի-
 պողականութեան է կատարվում եւ լոկ բնա-
 կան պահանջները բաւականացնելու հետեւանք է:

*) Օրերէն յն. meteoros. Օդի մէջ տեղի ունեցող
 փայլուն երեւոյթ, որ յանկարծ երեւում է եւ շուտով
 դարձեալ անյայտանում:
 Ծ. Թ.

որը նիւթական ու հոգեւոր կեանքի զարգացման համար է յառաջանում: Մանկան մտանոր շրջանի զարգացման համար սորանից առաւել լավ եւ օգտակար կրթութիւն մինչեւ անգամ անկարելի է ցանկալ: Նա զննում է համեմատում, դատում ու կշռագատում: այս վարժութեանց համար բոլոր կարեւոր միջոցները ձեռքի տակ ունենալով: Զբօսանքների եւ այն նպատակին՝ յարմարեցրած մօզէլների շնորհիւ նորա դիտողութեան շրջանը ամենաօգտակար առարկաներով կարելի է ընդարձակել: Այսպիսի պարբերական դասերի նպատակայարմարութիւնը ակներեւ է:

Այն մանուկը, որը հարց ու փորձ է անում այն ամենի մասին, ինչ նորան հետաքրքրում ու գրաւում է, պարզ է որ ամենակարճ միջոցով ձեռք կը բերի գիտութեան բոլոր ճիւղերից բազմաթիւ տարրական ու շատ պարզ տեղեկութիւններ, որովհետեւ բոլոր գիտութեանց ուսումնասիրելու առարկան ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեր շուրջը կատարող բնութեան երեւոյթները եւ աշխարհումն եղած բոլոր առարկաները: Բայց եւ այնպէս, բոլոր այս տեղեկութիւնները, որքան էլ հասկանալի չը լինէին մանկան համար, նորա

փոքրիկ գլխում անկարգ ու խառնափնթոր կը տեղաւորուին, եթէ որ մենք միայն բաւականանանք լոկ նորա հարցերին չոր ու ցամաք պատասխանելով:

Այս պատճառաւ էլ հարկաւոր է յաճախակի մանկան ուշադրութիւնը միեւնոյն առարկաների վերայ դարձնել, որոնք նորա դիտողականութեանը առատ նիւթ են մատակարարում: Բայց ինչպէս այն բոլորը միատեղ ժողովել, նա մտնաւանդ որ բնութեան երեւոյթները վաղանցուկ են եւ նոցա դիտելու համար յարմար ըզպէներ որսալը չափազանց դժուար: Բացի սորանից բոլոր առարկաները եւ բնութեան տարբեր երեւոյթները խառն ի խուռն են եւ մեզ առանց որ եւ է յաջորդականութեան ու կարգի են ներկայանում: Այն ինչ շատ կարեւոր է, որ բոլոր տեղեկութիւնները, որոնցով նորա մտաւոր շրջանն ընդարձակվում է, հաղորդէինք նորան յայտնի կարգով ու յաջորդականութեամբ:

Ակնյայտնի է, որ պէտք է մի որ եւ է միջոց գտնել, միատեղ հաւաքելու եւ յայտնի կարգով դասաւորելու բոլոր զանազանակերպ առարկաները, բնութեան հրաշքներն ու երեւոյթները, որոնք մեր աչքերին արագաթռիչ ու պատահաբար են ներկայանում:

Ք.

Ահա այստեղ օգնութիւն է հասնում մեզ նկարչութիւնը, բնութեան այս կենդանի բարբառը, որը մանուկն իսկոյն ըմբռնում է, երբէ՛ք ուսումնասիրած չունենալով նորան: Յոյց տուէք մանկան ծառի, ծաղկի կամ կենդանու նկարը: նա իսկոյնեւեթ կը ճանաչի այս առարկաները, կարծես թէ իրականութեան մէջ է տեսնում նոցա: Նոցա զննելը անհամեմատ մեծ բաւակա-նութիւն է պատճառում նորան իսկական առարկան նկարի հետ համեմատելու ժամանակ:

Այսպէս ուրեմն, նկարների միջոցաւ մենք կը տիրապետենք բոլոր աշխարհին եւ ձեռքի տակ ունենալով մի քանի նկարներով լի գրքեր, կարող ենք ըստ ցանկութեան, բնութեան բոլոր հրաշքներն ու երեւոյթներն արտադրել:

Հետեւաբար, նկարների մի ժողովածու պէտք է կազմել, որոշ յաջորդականութեամբ դասաւորուած: Այս ժողովածուն կը կազմեն ծառերի ու ծաղիկների ամենընտիր տեսակները, ամենաօգտակար կենդանիքը, ամենակարեւոր եւ ամենահետաքրքիր ուսումնական երեւոյթները — մի խօսքով այս պատկերներից բնական գիտութեանց մի դասընթաց կը կազմուի:

Մարդիկ միշտ այն եզրակացութեանն էին գա-

լիս, թէ ի՞նչ մեծ նշանակութիւն ունի դաստիարակութեան համար բնութիւնը իւր բոլոր երեւոյթներով դիտելը նկարների թէ ուրիշ որ եւ է միջոցով: Հորացիոսն արգէն գրում էր.

Segnius irritant animos demissa per aurem.

Quam quae sunt oculis subjecta fidelibus.

(Առաւել շուտ աչքերի, քան թէ ականջների օգնութեամբ ձեռք է բերվում մտաւոր կատարելութիւնը):

Մեր ժամանակ նկարներն այնքան տարածուած են, որ կարելի է կարծել, թէ այս դիպուածում այլ եւս ոչինչ չը պէտք է ցանկալ. բայց, դրժբաղտաբար, իրօք բոլորովին ուրիշ է. բաւական չէ՛ զէնքը ձեռքին ունենալ, պէտք է խոհեմաբար օգտուիլ նորանից: Բոլոր այս տեսակի մինչեւ անգամ ամենայարմար փորձերը հեռաւոր անցեալից սկսած մինչեւ մեր օրերը, մանաւանդ այս մեթօդի մատաղ հասակին յարմարացնելու ժամանակ, դեռ եւս անթիւ պակասութիւններ ունեն, եւ բազմակողմանի հոգատարութեանց կարօտ են:

Ք.

Երբ մանուկը կը սկսի իւր մտքերը կենդանացնել, այնուհետեւ կարելի է ցոյց տալ նորան դասագրքի առաջին թերթը. սա նորա համար

կը լինի միանուագ թէ դաս, թէ բաւականութիւն եւ թէ վարձատրութիւն։ Առաջին թերթը ինչպէս նա եւ երկրորդը, երրորդը եւ հետեւեալները առարկան մեծ գիրքով պիտի ներկայացնեն։

Այս պատկերները տեսնելիս, մանուկն աննկարագրելի բաւականութիւն կը զգայ եւ կը թօթալի իւր մանկական բարբառով կը սկսէ պատմել ու հարցնել։ Աւելի ասածի համար նորան գոյում են, ուղղում են սխալները եւ բացատրում այն, ինչ նա կարող է հասկանալ։ Մի եւ նոյն պատկերը մի քանի զրոյցների նիւթ կարող է գառնալ, եւ չը պէտք է յաջորդ պատկերին անցնել։ մինչեւ որ մանուկը լրիւ չըմբռնէ նախորդ պատկերի իմաստն ու նշանակութիւնը։

Առիթ տալով մանկանը աչքի անցնելու զննելի առարկայի հետ կցորդուած բոլոր բնական երեւոյթները, որոց նա իրականութեան մէջ նկատել էր, դուք ո՛չ միայն կարգի կը բերէք նորա մտքերը, այլ եւ առիթ կը տաք նորան ամենագուրեկան համեմատութեանց ու նմանութեանց մէջ վարժուելու։ Իսկ սոցա մեծ նշանակութիւնը դաստիարակութեան գործում կարօտ չէ բացատրութեան։

Միակերպ յաջողութեամբ սկզբում կարելի է պատկերներով գիտել եւ ուսումնասիրել տալ առարկաները, իսկ այնուհետեւ զբաղուիլ իրական առարկաները գիտելով, եթէ յարմար ա-

ռիթ կը պատահի։ Այս կարգը նոյնքան օգտակար է որքան եւ առաջինը։ Իրականութեան նմանութիւնն ու համեմատութիւնը պատկերի հետ, որոնք տեղի ունին այս պարապմունքների ժամանակ, գրգռում են նորա հարցասիրութիւնը, վերին աստիճանի հետաքրքրում են նորան եւ առանց յօգնեցնելու, կրթում են նորա բոլոր ընդունակութիւններն ու ոյժերը։

Երբ որ այսպիսով կը բացատրենք պատկերների ողջ ժողովածուն, պէտք է այն նորից աչքի անցնել, մէկ, երկու եւ աւելի անգամ։ այնպէս ինչպէս մեր միջնակարգ դպրոցների աշակերտները իրենց դասագրքերն են կրկնում։ Ամեն անգամ, մանուկը նոր նոր տեղեկութիւններ ստանալով, ուսուցչին նոր նոր հարցմունքներ կ'առաջարկէ. եւ այն ժամանակ արգէն աւելի լիակատար բացատրութիւններ կը ստանայ նորանից։

Այսպիսով նորա խելքը աստիճան առ աստիճան կը զարգանայ, առանց մեծ ջանքերի ու դժուարութեանց։

Նոյնպէս հարկաւոր է ձեռք բերել արուեստների եւ զանազան արհեստների ու արդիւնագործութեան գլխաւոր ճիւղերի պատկերները, որոնց նիւթը կը լինի բոյսերի մշակութիւնը, կենդանապահութիւնը եւ այլն։ Այս միջոցով մանուկը կ'անցնի արուեստների ու արհեստների ամենահամառօտ ընթացքը, լրացնելով այն զբօ-

սանքների ժամանակ ձեռք բերած օգտակար տեղեկութիւններով: Զբօսանքները միշտ օգտակար նպատակով պիտի ձեռնարկուին: Դաշտը հերկելիս կամ վարելիս, արհեստանոցներումն ու գործարաններում նա կը բացատրի այն ինչ սովորել էր պատկերներով:

Ս.

Պէտք է զգուշանալ մանկան ուշադրութիւնը յօգնեցնելուց: Այս պայմանով միայն դասատուութիւնը յաջողութիւն կունենայ: Հէնց այդ պատճառաւ էլ պէտք չէ հոգալ, որ սովորական պատահարներն ու մանրակրկիտ վերացականութիւնները, որոնք սերտ կապ ունին մանկան դաստիարակութեան հետ, բոլորովին տեղի չունենային: Շատ բնական է, որ նա կը ջանայ միտը պահելու բոլոր տեսածն ու իր ներկայութեամբ պատահածը, որը որեւէ յարաբերութիւն կամ նմանութիւն ունի նորա հետ: Ինչ որ իւր աչքի առաջ եղած պատկերն է ներկայացնում: Զը պիտի խանգարել նորա մանկական շատախօսութեան, ընդհակառակն, դաստիարակն աւելի պէտք է խրախուսէ նորան՝ մի հետաքրքիր եւ ընդամին խրատական բան պատմելով: Այս պայմանով դասը անվերջ կարող է շարունակուիլ՝ ամենեւին չը յօգնեցնելով մանկան ուշադրու-

թիւնը: Պատկերները թէ ախորժելի զրոյցի եւ թէ կանոնաւոր դասի համար ընտիր նիւթ են մատակարարում: Այսպիսով մանկան խելքն ու միտքը զարմանալի դիւրութեամբ է զարգանում: «Քանի քիչ իսկական դասեր լինին, ասում է Ֆէնէլօնը՝ այնքան առաւել լաւ: Ուրախալի զրոյցների միջոցաւ աւելի շատ օգտակար տեղեկութիւններ կարելի է հաղորդել մանկան, քան թէ նոյն իսկ դասերի ժամանակ»: *)

Այդպիսով, զարգացնելով եւ ուժեղացնելով մտաւոր ընդունակութիւնները, (դաստիարակութեան ամենագլխաւոր նպատակը, որ երբեք չը պէտք է մոռանալ), միեւնոյն ժամանակ նորան տալիս են ամենահեշտ, պարզ եւ ուղիղ հասկացողութիւն իրեն ջլապատող ու հետաքրքրող բնութեան մասին. այն բոլոր առարկաների, որոնք կարող էին օգտակար լինել նորան եւ որոց նա միշտ եւ հանապազ ակամայ հանգիւստ է:

Չ.

Այս մեթօդի հետ սերտ կցորդուած մի ուրիշ առաւելութիւնն այն է, որ մանկական զրոյցների ժամանակ պարզ ու կանոնաւոր ոճով խօսելիս, նորան աւելի դիւրութեամբ մայրենի լեզուն կ'ուսուցանենք, քան թէ մեր դպրոցներում: Որ-

*) Education des filles. V Գլուխ:

պէս զի մանուկը բառերը ճիշտ արտասանէր, հարկաւոր է միայն նորա ներկայութեամբ կանոնաւոր լեզուով խօսել. նա ակամայ կը կրկնի լաւը:

Այս կերպով մեր աշակերտը ամենակարճ միջոցով՝ օգտակար տեղեկութեանց անհուն պաշար է ձեռք բերում: որը կարող է բանաւոր կերպով դիւրութեամբ հաղորդել ուրիշին: Երբ նա գրել կը սկսի, այն պատկերներն, որոնցից նա իւր առաջին հասկացողութիւններն ու գիտնական տեղեկութիւններն հաւաքեց, նորա գրաւոր պատմութեանց ու նկարագրութեանց նիւթ կը լինեն: Լաւ ուսումնասիրելով առարկաները, նա չի դժուարանալ իւր գիտութիւնը թղթի անցնելու եւ առանց յօգնելու, յայտնից գէպի անյայտը, հեշտից գէպի դժուարը, պարզից գէպի բազմաբանալը կ'անցնի: Երբեք չը դժուարանալով բառեր գտնելու իւր մտքերն արտայայտելու համար:

Այսպիսի դասերը առանձին հետաքրքրութիւն ու նշանակութիւն են ստանում: Եթէ մի քանի մանուկներ միասին մասնակցում են այդ դասերին: Իւրաքանչիւր մանուկ իրեն յատուկ ոճով ու դարձուածքներով բացատրում է կարգով, առանց ամօթի ու երկիւղի. մանուկներից ամենաընդունակը կարող է կրկնել տուողի դերը կատարել:

պատմութեան անգին ծառայութիւնը սկզբնական դաստիարակութեան գործում: — Ի՞նչպէս է նա զարգացնում սիրան ու միտքը: — Ի՞նչպէս կարելի է հետաքրքիր անել մեծ մարդոց կեանքը, եւ նոյն կեանքի ու գործունէութեան յիշատակը վառ պահել մանուկների սրտերում: — Ի՞նչպէս պէտք է աւանդել այս առարկան: —

Վ Ե Ց Ե Ր Ո Ր Գ Գ Լ Ո Ւ Խ .

Պատմութեան անգին ծառայութիւնը սկզբնական դաստիարակութեան գործում: — Ի՞նչպէս է նա զարգացնում սիրան ու միտքը: — Ի՞նչպէս կարելի է հետաքրքիր անել մեծ մարդոց կեանքը, եւ նոյն կեանքի ու գործունէութեան յիշատակը վառ պահել մանուկների սրտերում: — Ի՞նչպէս պէտք է աւանդել այս առարկան: —

Ա .

Պատմութիւնը կարող է անգին ծառայութիւն անել մանկան սկզբնական դաստիարակութեան գործին մասամբ իրա հետաքրքրութեամբ, (եթէ լաւ է դաս տրվում) մասամբ էլ նորանով, որ նա, բացի գիտնական արժանաւորութիւնը, տալիս է նա եւ առաքինութեանց ընտիր օրինակներ, բոլոր հասակների ու ամբողջ կեանքի համար կենցաղավարութեան ընտիր կանոններ: Յաջող ընտրուած օրինակները խրատական քաղցրներից առաւել լաւ են ներգործում, մաքա-

ւանդ մանուկ հասակում: «Ոչինչ այնպէս խորը ու դիւրութեամբ չի թափանցում հոգում: որպէս օրինակի ազգեցութիւնը»: *)

Ինչպէս գործնական կեանքին յարմարեցրած բարոյական կանոնները, նոյնպէս եւ օրինակը իւր ամենակարող ներգործութիւնն է անում մանկան վերայ: Եւ այս պատճառաւ էլ, պէտք է պահպանել նորան վատ օրինակներից, պատեհ դիպուածում բացատրելով նոցա իսկական նշանակութիւնը եւ ըստ կարելւոյն բարի օրինակներով շրջապատելով նորան: Այս բանը առօրեայ կեանքում միշտ չի յաջողուիլ մեզ, բայց մեր առաջարկած պատկերների ժողովածուն սորա համար ամենադիւրին միջոց է ներկայացնում:

Որպէս զի միանգամից երկու գործ կատարենք, մանկանը օգտակար տեղեկութիւններ հազորդենք եւ միեւնոյն ժամանակ առիթ տանք նորան նմանութեան արժանի օրինակների հետ ծանօթանալու, պատմութիւնից պէտք է համապատասխան անցքեր ընտրել: Պատկերների միջոցաւ բացատրելով նոցա միտքը, մանկան կարելի է առաքինութեան ամենընտիր օրինակներով շրջապատել, եւ դորանով վառ պահել նորա սրտում բարութեան սէրը:

*) Լօկկ. (Locke) Խորհրդածութիւններ դաստիարակութեան մասին:

Բօլէնն ասում է. «Պատմութեան վերայ ես նայում եմ, իբրեւ մանուկ հասակի ամենալաւ դաստիարակի վերայ, որը ընդունակ է միանգամայն հետաքրքրել եւ ուսուցանել, զարգացնել խելքն ու միտքը, եւ յիշողութիւնն անթիւ ախորժելի եւ օգտակար տեղեկութիւններով հարստացնել»: *) Բօլէնը նոյնպէս յիշեցնում է մեզ Պլուտարքոսի պատմածը ծերունի Վատօնի մասին, թէ ինչպէս այս հռչակաւոր ցէնզօրը, որի անունն ու առաքինութիւնները փառք բերին Հռոմայ հասարակագետութեան, ինքն էր դաստիարակում իւր որդուն: Հաւատ չընծայելով դաստիարակների եռանդագին հոգսերին: Նա հեղինակում, եւ իւր ձեռքով խոշոր տառերով պատմական հատուածներ էր գրում, որպէս զի նորա որդին, դեռ հայրական տնից ոտք չը դուրս դրած, մանուկ հասակում կարողանար իւր հայրենիքի մեծ մարդոց հետ ծանօթանալ, եւ նոցա ազնւութեան ու քաղաքական սիրագործութեան հին օրինակներով զարգանալ:

Հէնց մեր դաստիարակութեան եղանակին, որը պատկերների գործածութեան վերայ է հիմնուած, որոնք միանուագ աչքի ու սրտի վերայ են ներգործում, պատմութիւնը անգին ծառայութիւն է անում:

*) Traité des etudes. Բ. Հատոր. VI Գիրք:

Ք.

կասկած չը կայ, որ մեր մանուկը ամենա-
արժանաւոր մարդ կը գառնար: Եթէ պատմա-
կան բոլոր հերոսները եւ բոլոր ժամանակների
մեծ մարդիկ նորա հետ միասին մի ժամանակ
ապրէին, եւ նորա աչքի առաջ եւ կատարէին այն
արժանայիշատակ գործերը, որոնցով փառաւո-
րուեցան, եւ որոնք մինչեւ ցայժմ քաղաքական
սխրագործութեան ամենընտիր օրինակն են ներ-
կայացնում. եւ եթէ մեր մանուկը նոցա հետ
ապրէր, նոցա մտքերին հաղորդակից լինէր, լսէր
նոցա խօսքերն ու խորհուրդները այնպիսի դաս-
տիարակի միջնորդութեամբ, որը ընդունակ լինէր
հասկացնելու նորան նոցա գործունէութեան մեծ
նշանակութիւնը: Դժբաղտաբար այս ցնորքներն
անիրագործելի են, բայց եւ այնպէս, պատմութիւ-
նը պատկերների միջոցաւ, եթէ մեր եղանակով
գաս տրուի, կարող է այն մարդոց տիպարը ստեղ-
ծել, եւ նոցա կեանքի ու գործունէութեան յի-
շատակը անջնջելի պահել նոր սերնդի համար:
Մեր մանուկը կարող է սնուիլ նոցա հոգւով,
կարող է ընտելանալ նոցա մտքերին, ղգացում-
ներին ու գործողութեան եղանակներին. մէկ
խօսքով, մանուկը կարող է այն բարոյական վե-
հութեան հասնիլ, որով հռչակուեցան այս օրի-
նակելի անձինք:

Երջանիկ մայրեր: Ձեզանից է կախուած
բոլորել ձեր քնքոյշ զաւակներին այս ընտիր հա-
տարակութեան շուրջը. դուք բնութիւնից նշա-
նակուած էք արմատացնելու նոցա հոգում այս
չքնաղ եւ ուժեղ իղէալները: Ձեզանից ենք սպա-
սում այս մեծ մարդոց արժանիները: Երբ նո-
րա Միմիայն դուք էք ընդունում պարզեւեղ
նոր սերունդը:



Ահա ինչպէս ենք խորհուրդ տալիս գործին
ձեռնամուխ լինել:
Սուրբ գրքից, ընդհանուր, եւ առաւելա-
պէս ազգային պատմութիւնից մի քանի այնպիսի
անցքեր պիտի ընտրել, որոնք առաւել լաւ կա-
րող էին լուսաւորել միտքը եւ վսեմացնել հո-
գին. եւ միեւնոյն ժամանակ, որոնք բարոյական
ոյժի ներգործութիւնը պայծառ կերպով են նկա-
րագրում:

Սոցա բացատրութիւնը բնագիտական պատ-
կերների պէս է լինում: Հէնց այնպէս պիտի զբա-
ղուել իւրաքանչիւր անցքի քննութեամբ, առաջ
բերելով մանկան համար նշանակութիւն ունե-
ցող, նոցա բարոյական կողմը. իսկ այնուհետեւ
մանուկը ինքը կը պատմի մեծից լսածը իւր
խօսքերով:

Մանուկներին հաճելի են այդ տեսակ զբաղմունքները. նոքա նայում ու լսում են ամենալարուած ուշադրութեամբ. նոցա միտքը անասելի դիւրութեամբ է զարգանում: Եթէ պատմական անցքը որ եւ է կապ ունի նոցա երբ եւ իցէ տեսած անցքի հետ, նոքա չեն դանդաղիր խելոյն պատմելու այդ անցքը: Այդպիսի շատախօսութիւնը անօգուտ չէ, որովհետեւ առիթ է տալիս այնպիսի նկատողութեանց, որոնք աւելի նպաստում են մանկական դաստիարակութեան, քան մի որեւէ ուրիշ միջոց:

Մանուկները նոր դասի, նոր պատկերի բացատրութեանը իբրեւ մի տօնի, մի վարձատրութեան են սպասում: Նոքա ուրախութիւնից դեռ մի քանի օր առաջ թռչկոտում են: Կարիք չըկայ ուսուցման այս եղանակի օգտակարութիւնն ապացուցանել: Նա ինքն ըստ ինքեան աչքի է ընկնում: Այս փոքրիկ արարածների ողջ մարմինը ուրախութեամբ է փայլում: նոցա դէմքերը խօհեմ, գուրեկան ու գրաւիչ են դառնում: նոքա ամբողջապէս սնվում են այս բարերար, քնքոյշ ու բարոյական ազդեցութեամբ:



Ե Օ Թ Ն Ե Ր Ո Ր Դ Գ Լ Ո Ւ Խ

Աշխարհագրութիւն. — Որքան մատչելի է այս գիտութիւնը մանուկ հասակին: — Ինչպէս կարելի է այդ գիտութիւնը աւանդել մանկան բազմաթիւ հաստատուն եւ թանկագին տեղեկութեանց օգնութեամբ:



Ա.

Դժուար չէ հասկացնել երեխային, որ երկրի մեծ տարածութիւնը կարելի է փոքր ձեւով ներկայացնել, ցոյց տալով նորան որեւէ քաղաքի յատակագիծը, եւ նկարելով թղթի վերայ նորա յայտնի այգու յատակագիծն եւ ծառուղիները, կամ կէտերով նշանակելով նորա բնակութեան եւ շրջապատող գիւղօրէից տեղը. եւ այդ կէտերը գծերով միացնել: — որոնք պատկերացնէին յայտնի ճանապարհներ իրենց բոլոր խորտուբորթութեամբ: Այնուհետեւ միայն մի քայլ կը մնայ հասկանալու աշխարհագրական

քարտէսների ու երկրագնդի նշանակութիւնը: Ահներեւ է, որ սկզբում մանկանը ամենազիւրիւն ու պարզ գաղափարներ են տալիս: Ինչպէս պատմութեան եւ բնագիտութեան դաստաւութեան ժամանակ, այստեղ էլ հարկաւոր է պատկերների մի կանոնաւոր ժողովածու կազմել որը նեկայացնէր ազգութիւնների, կենդանիների ու բոյսերի գլխաւոր տիպերը. աշխարհիս զանազան կողմերի հազուագիւտ հնութիւնները. եւ պատմական ամենանշանաւոր յեղափոխութիւնները: Այս պատկերները բացատրելիս, մեր սանիկը կ'ուսումնասիրէ աշխարհագրութիւնը եւ կը պահպանէ յիշողութեան մէջ այն մի քանի արուեստագիտական ոճերը, որոնք կարելոր են այս գիտութիւնն ուսումնասիրելու համար: Պ. Բլանշարը յաւ հասկացաւ այս եղանակի արժանաւորութիւնը: «Չոր ու յամաք անունների համառօտութեանց փոխանակ» այստեղ առաջ է գալիս մի հետաքրքրութեամբ լի զբաղմունք, որը հարստացնում է մանկան միտքը բամաթիւ հաստատուն գիտնական տեղեկութիւններով. աշխարհագրութիւնը այդ ձեւով աւանդելիս, ամեն մի առօրեայ անցք յիշեցնում է մանկանը այն առարկան, որը դասի ժամանակ հետաքրքրել էր»: *)

*) Revue des deus Mondes. հ. 4. 15 1871 ամի.

... անունի տամբ իցմիցմի Թ. յս արեմ նայ լիցմի ... արդարմիցի իլիամարմ մարամց մանկ. ասու անգլ ... արդ Այդպիսով այն գիտութիւնը, որը այնքան տաղակալի է սովորական եղանակով աւանդելիս, առանց ձանձրութեան, դիւրութեամբ ու սիրով է ձեռք բերւում: Մինչեւ անգամ եթէ այդ զբաղմունքներին առանձին նշանակութիւն էլ չը տանք, բայց եւ այնպէս նա օգտակար կը լինի, եւ մանուկը ձեռք կը բերէ միեւնոյն ժամանակ բազմաթիւ հաստատուն եւ օգտակար տեղեկութիւններ, որոնք վերին աստիճանի կը հետաքրքրեն նորան:

Երբ մանուկը աշխարհագրութեան ընթացքը այդ եղանակով կ'անցնի, այնուհետեւ բաւական է երկրագնդի մի որեւէ կէտին մատնացոյց անել, եւ նա կը պատմի ձեզ այն ամենը, ինչ վերաբերում է այնտեղ բնակեալ մարդոց, կենդանիներին ու բոյսերին, եւ այդ տեղ ծաղկող արհեստներին: Այն ինչ շատ յաճախ պատահում է, որ մեր դպրոցների մինչեւ անգամ յաջողակ քննութիւն տուած եւ աւարտած աշակերտը, իւր յիշողութեան մէջ միայն մի քանի անուններ է պահում, որոնք նորա սրտին ու մտքին ոչինչ չեն ասում:

Պէտք է նկատել, որ այդպիսի բարեյաջող արդիւնքները միայն բանաւոր դասաւանդութեամբ են ձեռք բերւում, իրական առարկա-

ների, կամ նոցա պատկերների զննութեամբ կարճ՝ ուսուցման բնական եղանակի միջնորդութեամբ. եւ քանի որ դեռ եւս աշխարհագրութեան դասագիրք չէ առել ձեռքը: Այդպիսով նա լաւ նախապատրաստուած կը լինի ծանր-զբաղմունքների համար, որոնց կարող ենք աւանդել երբ կամենանք:



ՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Ինչպէս զարթեցնել մանկան մէջ գեղեցկի բնազդմական ճաշակը իւր բոլոր պարագաներով:—Իբրեւ վաղճանակէտ՝ բնութեան առաջին խրատները պէտք է ընդունել:—Ինչպէս է կազմակերպում մանկան ձեռքի վարժութիւնը եւ աչքի չափը:—Տարրական նկարչութեան աւանդելու նպատակը:—Ինչպէս է կազմակերպում մանկան լսելիքն ու ձայնը:—Տարրական երգեցողութեան աւանդելու նպատակը:—

Ա.

Եթէ կամենում էք մանկան մէջ գեղեցկի բնազդմական ճաշակը զարգացնել, շրջապատեցէք նորան անպայման ընտրելագոյն առարկաներով եւ ուսուցէք ըստ արժանեօք գնահատելու դոցա: Գեղեցկութեան գաղափարը ֆիզիքական, մտաւոր ու բարոյական ասպարէզներում: Գիւրութեամբ է ձեռք բերում մանուկը մեր եղանակի միջնորդութեամբ: Որովհետեւ մեր առաջարկած

պատկերներն ժողովածուները՝ մի առ մի պիտի ներկայացնեն ինչպէս գաղափարները, նոյնպէս եւ ձեւերը. իսկ այս ժողովածուները միշտ երեխայի աչքի առաջն են:

Բայց յայտնի է որ կեանքի սովորական պայմանները մեզ վերայ թէ եւ անզգայաբար, բայց յարատեւ ու զօրեղ են ներգործում: «Այգ-պիտի ներգործութիւնները» ասում է Մօնտէզիւն, ամենահաստատուն եւ անջնջելի հետքեր են թողնում»... «Նատ մեծ նշանակութիւն ունի եթէ մանուկը ամենամատաղ հասակից միշտ եւ հանապազ տեսում է արուեստների ամենաչքնազ եւ ամենընտիր օրինակներ: Սորանով է բացատրվում Իտալացւոց բնածին ընդունակութիւնը արագութեամբ ըմբռնելու գեղարուեստի բոլոր չքնազութիւնները»: *)

Հէնրիէն ասում է «..... Այն մարդիկ որոնք ի բնէ քիչ սէր ունեն բարոյական, մտաւոր ու ֆիզիքական գեղեցկութեան գաղափարն ըմբռնելու, վերջ ի վերջոյ բոլորովին աննկատելի կերպով այն օրինակների ազդեցութեանն են ենթարկվում որոնք նոցա աչքին ներկայանում էին մանուկ հասակում»: **)

*) Revue des Deux Mondes. Յունիսի 1. Ին, 1862 թ.

**) Revue des Deux Mondes. 4 տկտ. 15. 1868. թ.

Այն հիման վերայ, մեր առաջարկած բոլոր միջոցները մանկան վերայ միեւնոյն հզօր ներգործութիւնը կ'ունենան:

Բացի այս բարերար ազդեցութիւնը, այգ-պիտի տարրական մեթօդիքական ուսուցումը դարձեալ այն օգուտը կ'ունենար, որ այն գիտութեանց հիմքը կը դնէր, որոնք ապագայում պիտի զարգանան: Թէ այս եւ թէ ուրիշ ուսուցմանց վերաբերութեամբ, մենք միայն բնութեան յուղմունքներին ենք յարմարվում: Նա մեր դաստիարակն ու ղեկավարն է:

Մանուկներն առ հասարակ նմանվելու շատ սէր ունին: Նորա սիրում են ուրիշի աղաղակներին ու երգերին նմանիլ, թղթի անցնել զանազան առարկաների ստուերները, խաղալիկներ եւ առ հասարակ ամեն տեսակ զարգեր նկարել: Երբեք այս զբաղմունքը չը պէտք է արգելել, ինչպէս սովորաբար անում են, այլ ընդհակառակն պէտք է խրախուսել մանկանը, առաջնորդելով նորան գոցանով զբաղուելու:

Այգ-եղանակով կարելի է մանկան ձայնը աննկատելի կերպով մշակել, նորա լսելիքը զարգացնել, աչքի չափը վարժեցնել, եւ ազատ ու կանոնաւոր գրութիւն ուսուցանել: Այս բոլոր նպատակները այնպէս դի-

բութեամբ են ձեռք բերվում: որ չէինք էլ երազիլ: Բնազգամամբ մանուկը նմանում է նորան: Ինչ որ տեսնում է. մի կտոր կաւիճ կընկնի ձեռքը թէ չէ, իսկոյն գրատախտակը նկարներով է լցնում: Նորա թոյլ եւ անսովոր ձեռքի այս անկանոն փորձերը այն հիմնաքարն են, որի վերայ բնութիւնը մատնացոյց է լինում եւ որից պիտի օգտուիլ մանկան ձեռքի ու աչքի չափը վարժեցնելով, ուղղելով նորա նկարները, զանազան խորհրդներով օգնելով նորան. բնազգաման միեւնոյն ոյժը, որը գրգռում է մանկան այս առաջին փորձերը անելու, նոյնպէս կը գրգի նորան դէպի կատարելագործութիւն ձգտելու: Խոհանարար առաջնորդուելով, այս կատարելագործութիւնը նորա հակումների ու ընդունակութեանց բնական զարգացման համապատասխան կը լինի:

Զը պէտք է մոռանալ, որ այս դիպուածում մենք չենք պահանջում նկարչութեան կանոններն աւանդել մանկան, այլ մատնացոյց ենք լինում միայն ձեռքի ու աչքի չափի վարժութեան անհրաժեշտ միջոցների վերայ: Մանկանը պիտի ուսուցանել ազատ ձեռքով ուղիղ եւ ծուռ գծեր ու շրջապատներ անցկացնել, եւ դոցա որոշեալ մասերի բաժանել: Սկզբում նա կարող է սեաւ գրատախտակի, ապա փոքրիկ քարետախտակի, եւ ի վերջոյ թղթի վերայ նկարել: Մինչդեռ մանկան աչ-

քն ու ձեռքը վատ սովորութիւններով չեն փրջացել, այս վարժութիւնները ամենանշանաւոր արդիւնքը կը տան, որոնք ապագայի համար շատ մեծ գին ունին: Այդպիսի զբաղմունքները շատ արուեստների ու արդիւնագործութեանց հիմքն են կազմում եւ շատ դիպուածներում օգտակար են լինում: Մարդս ճարտարապետ, կամ հասարակ արհեստաւոր կը դառնայ, երկրաչափ կամ զօրական, նա իւր մէջ շատ անփոխարինելի միջոցներ կը գտնի: «Այնքան շատ արդիւնագործութիւններ կան, որոնք նկարչութիւն են պահանջում, որ աւելի դիւրին էր թուել նոցա, որոնք այդ արհեստին կարօտ չեն, քան նոցա, որոնք միշտ եւ հանապազ դոցա կարօտում են»: *)

Պ.

Երբ մանուկը միանգամ կանոնաւոր ուղղութիւն կը ստանայ, եւ նկարչութեան արուեստի վերայ ճիշտ գաղափար կը կազմէ, այնուհետեւ նորա ապագայ զարգացումը ինքն ըստ ինքեան բնական շաւղով կ'ընթանայ: Ինչպիսի դիպուածներումն էլ հարկաւորուի նորան գծեր անցնել, կամ որեւէ յատակագիծ կազմել, նա սովորա-

*) d' Henriét, Revue des Deu Mondes. 15. Հոկտեմբերի, 1868 ամի:

կան ճշտութեամբ կը կատարէ այդ: Այս տեսակ նոր խնդիրները, որոնք կեանքի ասպարիզում կը պատահեն նորան, օգտակար վարժութիւններ կը լինին նորա համար եւ կը հաստատեն նորանում այն սովորութիւնները ինչ նա մատաղ հասակում իւրացրել էր:

Այս ամենը վերաբերումէ նա եւ ձայնի ու ականջի կանոնաւորութեան: Սկզբում կարիք չը կայ երեխային երաժշտութեամբ զբաղեցնել. բաւական է նորան գաղափար տալ հնչիւնի մասին, ձայնանիշների եւ մի քանի դիւրին գործնական եղանակների մասին, որոնք կարող էին զարգացնել հաստատել եւ նպաստել ձայնական գործարանների կանոնաւորութեանն ու կատարելագործութեան, քանի որ դեռ չեն ենթարկուել զանազան անկանոն ազդեցութեանց:

Ամենահասարակ վարժութիւնները նպաստում են ձայնական գործարանների զարգանալուն եւ աննկատելի կերպով զարգացնում են մանկան մէջ գեղեցկի բնածին ճաշակը, որը հասակն առնելու հետ աճում ու ամրապնդվում է: Այդպէս է կեանքի եւ իւրաքանչիւր կազմուածքի օրէնքը: Այդ կերպ նախապատրաստուած մանուկը շատ ընդունակ կը լինի երաժշտական ծանր զբաղմունքներին. որովհետեւ կատարելապէս իւրացրեց գեղարուեստների ոգին ու նոցա գործադրութիւնը:

անտարբէր են զոմայի խորքն ինչ ազգայնական
 -ու յորդոստանի կեանքի մասին ինչպէս
 -մարտի 1918 թ. հունիսի 15-ին Նյու Յորքի
 -ում տարբեր պատկերներու նկարներու ամբողջ
 շարքը գեղարուեստի զարգացման համար
 -գրեթէ յոյսով ճաշակուած ամենամեծ զորակէ
 ղը ունի ինչպէս ինչպէս ինչպէս ինչպէս ինչպէս
 -է:

ԻՆՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ.

Գրել եւ կարդալ:— Ի՞նչպէս կարող է մանուկը միանուազ նը-
 կարչուծիւն եւ գրել—կարդալ ուսանել:— Ի՞նչպէս կարող է մա-
 նուկը կարդալ եւ մի քանի խօսքեր գրել, չը ճանաչելով մինչեւ
 անգամ բոլոր տառերը:—

Ա.

Մեր առաջարկած եղանակով մանկան ընդունակութիւնները արագութեամբ են զարգանում եւ հետզհետէ ամրապնդվում: Ամենակարճ միջոցում նա ոչ միայն կարողանում է յաջող ուսումնասիրել դժուար խնդիրները, այլ եւ նոքա անհրաժեշտ կարեւոր են դառնում: Իրբեւ նորա ամրապնդուած ընդունակութեանց համար կարեւոր վարժութիւններ: Այս ժամանակ կարելի է կարգաւ գրել է— «—դպրոց—»-ն ուսուցանել: Այժմ այս զբաղմունքները դիւրութեամբ կը յառաջանան, այն ինչ սովորական եղանակ-

ներով նոքա մեծ նեղութիւններ են պատճառուած խեղճ մանուկներին, թունաւորելով նոցա թարմ մանկութիւնը եւ երբեմն էլ յաւիտեանս մեռցնելով նոցանուա՛մ ամենընտիր ընդունակութիւնները:

Երբ մեր աշակերտը կը սկսի տառեր գրել, մինչեւ այդ ժամանակ սովորած լինելով նկարչութեան սկզբնական կանոնները, նորա ձեռքը բաւականաչափ վարժուած կը լինի, եւ այնուհետեւ գրութեան կանոնները մեծ դժուարութիւններ չեն պատճառի նորան:

Բ.

Գրութեան եւ նկարչութեան կանոնները միատեսակ են. նոքա կայանում են մի քանի ուղիղ եւ կոտրտած գծերի մէջ, որոնք տարբեր կերպով կապվում ու դասաւորվում են: Գժուար չէ սովորեցնել մանկան քարտախտակի վերայ նկարելու * տառը եւ Բ, * եւ Գ տառերի պարզ գծերը, որոնցից կազմվում են մնացած գրաւոր նշանները: Մի նոր տառ կազմելու համար, պէտք է նոցա կամ միացնել, կամ մի փոքր փոփոխել:

Ապա կարելի է նորան ցոյց տալ, թէ ի՞նչ պէս են կազմվում այն տառերը, որոնցից կազմվում է նորա հօրն ու մօր անունը. կամ այն

անձանց ու առարկաների անունները, որոնք նուա՛ն սիրելի են: Այդպիսով նա կարգալը՝ գրելով կը սովորի. եւ նախ քան թէ կարող էր բոլոր տառերը գրել ու կարգալ, նա արդէն կարող է մի քանի խօսքեր գրել ու կարգալ. Շուտով կը զբաղուի այդ վարժութիւններով եւ համարեա՛ միանուագ կը նկարի նկարչութեան ամենապարզ ձեւերը, քիչ կարգալ ու գրել կ'իմանայ: Այսուհետեւ կարգալ ուսուցանելը կապվում է ուղղագրութեան կանոնների բացատրութեան հետ:

ներին կանոններն անգիր անել. նորա շուտով մոռացվում են: Այն ամենը, ինչ մանուկներին հարկաւոր է, ուսուցէք նոցա իբրեւ գործնական պահանջի անհրաժեշտ հետեւանք, իւրաքանչիւր յարմար դէպքից օգուտ քաղելով: *)

Մենք մի քանի խօսքով կը բացատրենք այս եղանակի էութիւնը եւ յուսով ենք որ իւրաքանչիւր ոք կը գնահատէ նորա նպատակայարմարութիւնը, Ծրինակի համար, եթէ կամենում ենք մանկանը թուի մասին գաղափար տալ, պէտք է գրատախտակի վերայ նորա աչքի առաջ գտնուող գլխաւոր առարկաների անունները գրենք. «էդան, փեպրակ:

Նորան հարցնում են, թէ ինչպէս կարող էր գաղափար տալ մի քանի սեղանների ու տետրակների մասին. նորան ժամանակ են տալիս մտածելու, որ առանց շտապելու, լաւ ըմբռնէր հարցը, եւ հասկանար, թէ ի՞նչ են ուզում նորան ուսուցանել. ապա պէտք է կամ ուսուցիչը կամ աշակերտը այս խօսքերի դէմ նոյն խօսքերը յոգնակի գրէ:

Սէդան Սէդաննէր.
Տէպրակ Տէպրակնէր.

Մանուկը շուտով կ'ըմբռնի գոյականների յոգնակի թուի կազմելու ընդհանուր կանոնի իմաստը:

*) Լօկկ (Locke) Խորհրդածութիւններ գոյականի մասին:

— ու՛ր զմոյսը զգրման ամա իյնմանկաւոր առ բնական
— միջոց զյարգում ամ իստիպար ըմ փոքրի մայ
— ուղղէր րոպայ 444 մայ սիամ Եւ իրարից զի իոյ
— ամ մ'իբրցա ամ յարգում առ յմիջոց զգրման ամ
— ամ զարգում առ յմիջոց զգրման ամ իստիպար զի իստ
— ամ իստիպար զի իստիպար զի իստիպար զի իստիպար
մասն ամ իստիպար զի իստիպար զի իստիպար զի իստիպար
ամի

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ.

Ուղղագրութիւն եւ բերականութիւն:— Ինչպէս է մանուկը ուղղագրութեան ընտելանում, առանց բերականութեան դասագրքի:— Գրաւոր շարագրութիւններ ուսուցանելու պարզ եւ դիւրին ոճը:—



Ա.

Այժմ կարելի է ուղղագրութիւնն ուսուցանել: Մեր աշակերտն արդէն դիւրին ու կանոնաւոր ոճով խօսում է մայրենի լեզուով, իսկ այս արդէն մեծ բան է եւ կանոնաւոր ուղղագրութիւն սուսանելու համար շատ կարեւոր: Սակայն ուղղագրութեան ուսուցումը կարող է դիւրութեամբ աւանդուիլ եւ մանուկը կարող է ուղղագրութիւն սուսանիլ:

Ուղղագրութիւնն ու քերականութիւնը պէտք է գործնական վարժութեանց միջոցով աւանդուին, առանց որեւէ վերացական կանոնների ու ոճերի: «Երբէք չը պէտք է ստիպել մանուկ-

տը, եւ այլ եւս երբէք չի մոռանալ: Իսառնանք
ածականներին, վերցնենք միեւնոյն խօսքերը.
Հարցնենք նորան, այս ինչպիսի սեղան է: Մեծ:
Իսկ տետրակը: Փոքր: Եւ այսպէս կը գրենք՝

Մէջ սեղան

Փոքր արարակ

Որպէս զի ածականների թուի ընդհանուր
կանոնի կազմութիւնը բացատրենք, նոյն կերպ
կը վարուենք, ինչպէս գոյականների ժամանակ,
այսինքն՝

Մէջ սեղան Մէջ սեղաններ

Փոքր արարակ Փոքր արարակներ

եւայլն եւայլն.

Քերականական բոլոր կանոնները այդպէս
են բացատրւում:

Նուտով կարելի է բայերին անցնել, որ մա-
նուկը կարողանայ փոքրիկ նախադասութիւններ
կազմելով զբաղուիլ. այս շատ կը նպաստէ առ-
չասարակ բոլոր ուսուցման:

Ակզբում մանկանը վարժեցնում են ներկայ
ժամանակի խոնարհման մէջ, ապա անցեալի եւ
ի վերջոյ ապառնի: Այս բանն իմանալով, նա
կարող է խօսքերով համարեա՛ւ ամենայն միտք ար-
տայայտել: Միւս բաղադրեալ ժամանակների խո-
նարհումը նա յետոյ կ'ուսանի:

Նա չը պէտք է առանձին խօսքերը խոնար-
հի. այլ միշտ ամբողջ նախադասութիւններ կամ

նորա մասերը: Իսկական գործողութիւնը միշտ
պիտի նախորդի բանաւոր ու գրաւոր գործո-
ղութեան. օրինակ՝. մանուկը կը շարժէ սեղանը
եւ ապա կը գրէ.

Ես շարժում եմ սեղան.

Ապա նորա ընկերը շարժում է սեղանը եւ
նա գրում է.

Իս- շարժում եմ սեղան.

Երրորդ աշակերտը շարժում է սեղանը եւ
նա գրում է

Նա շարժում է սեղան.

Բոլորքեան շարժում են սեղանը եւ նա
գրում է.

Մենք շարժում ենք սեղան.

եւայլն եւայլն.

Ք.

Պարզ է որ այդ կերպով կարելի է քերականութեան
բոլոր կանոններն աւանդել: Այդ կանոններն,
այդպէս ասել, գործնական են դառնում, եւ իրա-
կանութեան յարմարւում: Նոյն իսկ առարկա-
ները աչքի առաջն են, նոցա գործողութիւն-
ները մանկան աչքի առաջն են կատարւում եւ
նա տեղն ու տեղը գրատախտակի վերայ գը-
րում է: Այնուհետեւ այս վարժութիւնները մա-
քուր արտագրւում են առանձին տետրակում,

որը նորա համար քերականութեան տեղ կը բռնէ: Այսպիսով մանուկները սովորում են իրենց մայրենի լեզուն, զեռեւս քերականութեան դասագիրք չը տեսած: Եւ ո՛չ մի քերականական վերացական կանոն չը սերտած:

Կարիք չը կայ մանուկներին առանձնապէս քերականական ընդհանուր կանոնների բացատրութիւններով զբաղեցնել: Նորա ժամանակով գործնականութեան մէջ կը պարզուին:

Յենէյօնը ֆրանսիական ձեմարանին գրում էր հետեւեալը: «Նս կարծում եմ որ պէտք է բաւականա՛յալ քերականութիւն աւանդելիս ամենահամառօտ եւ ամենագիւրբին ոճով: Սկզբում բաւական է աշակերտին միայն ամենահասարակ կանոնները հասկացնել. նոցա բացառութիւնները (զարտուղութիւնները) փոքր առ փոքր յետոյ կ'իմանայ: Ամենագլխաւորն այն է, որ աշակերտին ըստ կարելոյն շատ միջոց տրուի իրեն արգէն յայտնի կանոնները գործադրելու»: Երբ

Կարճ միջոցում երբեմն մի քանի ամսից յետոյ, այս եղանակով սովորած մանուկները կարողանում են առանց ուրիշի օգնութեան փոքրիկ շարագրութիւններ գրել, թէ ի՞նչ են տեսել զբօսանքի ժամանակ, կամ ի՞նչպէս են անցկացրել օրը: Նորա արգէն կարող են մի հատուած գրել սրբազան կամ բնական պատմութիւնից, որը նախընթաց դասին բացատրուած էր նոցա:

Այսպիսի շարագրութեան մէջ համարեա՛ ամենեւին չեն պատահում ուղղագրական կամ քերականական սխալներ: Այսպիսի յառաջադիմութիւնը կարող է անհաւատալի երեւալ, այն ինչ մենք ճշմարիտն ենք ասում, առանց որ եւ է չափազանցութեան:

Նոյնպէս պէտք է նկատել, որ այս լաւ արգիւնքները մանուկները ձեռք են բերում առանց յօգնեցնելու եւ ստիպողականութեան, կարծես թէ միշտ հաճելի խաղով են զբաղուած: Այս օգտակար տեղեկութիւնները ձեռք բերելու հետ միասին, զարգանում են եւ բոլոր հոգեկան ընդունակութիւնները:

Իսկ ուսուցման սովորական եղանակով ուսանելիս, խեղճ մանուկները շատ յաճախ ամբողջ ամիսներ այբբենարան են կարդում, եւ ամբողջ տարիներ քերականական ամենատարրական կանոնների վերայ գլուխ կոտորում: Նորա դառն զգուանօք ատում են ուսումը. ուսումնարանը նոցա կեանքի թունալից բաժակն է դառնում, ուր բոլոր ձիրքերը ոչնչանում են եւ ընդունակութիւնները մեռնում:



ՏԱՍՆՈՒՄ ԷԿԵՐՈՐԳԻ ԳԼՈՒԽ

Թուաբանութիւն:—Ի՞նչպէս է մանուկը ուսանում Թուաբանական չորս հիմնական գործողութիւնները, առանց Թուաբանական ձեռնարկի:— Գործնական դասաւուժութիւն:—

Ա.

Թուաբանութիւն ուսուցանելուց աւելի դուրեկան, առաւել հեշտ բան չըկայ: Մանուկը դեռ թուանշաններ գրել չ'իմանալով եւ դասագիրք չը տեսած, կարող է թուարկութիւն ուսանիլ: Թուարկութիւնը, գումարումը, հանումը, բազմապատկումն ու բաժանումը նա կարող է ուսանիլ գնտակներով, հատիկներով, խորանարդներով, կոճակներով, մի խօսքով, ինչ կերպ առաւել նպատակայարմար կը դատուի:

Երբ նա ընտելացաւ յիշեալ առարկաների վերայ թուաբանական գործողութիւնները կատարելու, այնուհետեւ կարելի է նորան թուար-

կութիւն ուսուցանել թուանշանների միջնորդութեամբ:

Այժմ այդ նորա համար ամենեւին դժուար չի լինիլ, ընդհակառակն, այդ նորա համար անհրաժեշտ պահանջէ: Թուանշանները նորա համար յարմար միջոց կը լինեն իրականացներու արդէն իւրացրած գաղափարները: Այդպիսով, իրական գիտութիւնից դէպի նոցա նշանակներն անցնելով, յայտնից դէպի անյայտը, հեշտից դժուարը, պարզ խմբաւորութիւններից (Combination) դէպի բարդ խմբաւորութիւնները մանուկն աննկատելի կերպով ամեն դժուարութեանց կը յաղթի: Թուաբանութեամբ պարապիլը հետաքրքրում է նորան, եւ նորա մտաւոր ընդունակութիւնները բնական ճանապարհով է զարգացնում:

Որպէս զի թուանշանների միջոցով թուարկութեան եզանակը ցոյց տանք նորան, պէտք է նախկին գործողութիւնները (որը առանց թուանշանների էր կատարուած), անել տալ եւ միեւնոյն ժամանակ գրատախտակի վերայ գրել տալ, որպէս զի զննական գործողութիւնները, որոց հետ տեսական գործողութիւններից առաջ էր ծանօթացել, միշտ նախապատիւ տեղը բռնէին:

Թուաբանական բոլոր գործողութիւնները միանուազ՝ նախ զննաբար եւ ապա գրաւոր պիտի կատարուին:

Միշտ պէտք է ամենադիւրին եւ պարզ խնդիրներէր սկսել, եւ աստիճանաբար դէպի խառն ու բազմադրեալներն անցնել:

Սկզբում գումարում է 1-ը 1-ի հետ. 2-ը 2-ի հետ. 3-ը 3-ի հետ եւ այլն եւ այլն: Գործողութիւնը միանուագ թէ կոճակներէ՛ եւ թէ գրատախտակի վերայ կատարելով: Երբ մանուկը թուարկել լաւ կ'իմանայ, այնուհետեւ նա մի քանի դասում կ'ուսանի գումարումն:

Ս.յդպէս են վարվում թուաբանական միւս գործողութիւններն ուսուցանելիս, վարժեցնելով աշակերտին ամենապարզ եւ ամենադիւրին խնդիրները վճռել տալով: մինչեւ որ նա լիովին չի իւրացնել դոցա:

Ս.յս եղանակով մանուկները շատ շուտով հիմնաւորապէս ուսանում են թուարկութիւնը, եւ թուաբանական չորս հասարակ կանոնները: Սոցա օգնութեամբ մանուկներն արդէն կարողանում են խնդիրներ վճռել, որոնք նոցա մտաւոր ընդունակութեանց զարգացման համար շատ օգտակար են:

Բ.

Փոքրիկ մանուկները սիրում են խաղալիս վաճառականի, տանտիկնոջ, մօր եւ այլն դերը կատարել: Ս.յս բանից կարելի է օգտուել ու-

սուցանելիս: Պէտք է մի փոքրիկ խանութ շինել, ուր միայն աշակերտները վաճառէին մանկական ամաններ, խաղալիքներ եւ այլն: Իսկ միւսները գնէին նոցանից: Ս.յս նպատակով կարելի է մանուկներին սեւաւ փող տալ՝ իսկական կամ կեղծ: Առուտուր անելուց յետոյ, մանուկները պիտի իւրեանց հաշիւները ստուգեն ուսուցչի ներկայութեամբ:

Ս.յդպիսի կանոնաւոր առաջնորդուած դասերը չափազանց հետաքրքիր են. նոքա անասելի բաւականութիւն են պատճառում մանուկներին: Ընդ նմին հարստացնելով նոցա մտաւոր շրջանը բազմաթիւ օգտակար տեղեկութիւններով: Ս.յն ինչ այս դասերը նոյն խաղերն են, միայն խոհեմաբար գործադրուած: Ս.յդպիսի մշտական մասնակցութիւնը մանուկների բաւականութեանց մէջ ո՛չ միայն չի խանգարում նոցա ուրախութեանը, այլ ընդհակառակն աւելի հետաքրքիր է անում այդ խաղերը, եւ դոքա մանուկների ճշմարիտ կեանքն ու երջանկութիւնն են կազմում:

Ս.յս վարժութիւնները, (ի բաց առնելով գրատախտակի վերայ կատարուող գործողութիւնները) կարող են կատարուիլ մինչեւ անգամ երբ դեռ մանուկները թուանշանների հետ ծանօթ չեն եւ մինչեւ անգամ երբ նոքա դեռ կարգալ գրել չը գիտեն:

Պ

Այ մի զբաղմունք մանկան այնպէս լաւ չի ծանօթացնում կեանքի գործնական կողմի հետ, որքան այդ խաղի նման դասերը, իսկ այս հանգամանքը շատ ծանրակշիռ է։ Այդ բանը Ֆենէլօնի սրատես խելքն էլ անուշադիր չէ թողել։ Ծանօթացրէք նոցա աստիճանաբար, ասում է նա, մարդու համար անհրաժեշտ եւ վաճառականութեան մէջ գործածուող բոլոր առարկաների արտադրութեան հետ։ Աստիճանաբար, առանց մասնագիտական զբաղմունքների օգնութեան, նորա կ'իմանան այն առարկաների պատրաստելու ամենընտիր եղանակները, որոնցով նորա օգտվում են եւ կը գիտենան նոցա իսկական արժէքը։ Սորանում է կայանում խոհեմ տնտեսագիտութեան հիմքը։ Այս տեղեկութիւնները առաւելապէս օրիորդների համար անհրաժեշտ կարեւոր են, թէ եւ ոչ որ զանցառութեան չը պիտի տայ նոցա, որովհետեւ ոչ մէկը չը պէտք է թող տայ բան առնելիս խաբելու իրան»։ *) «Նստ մարդիկ, աւելացնում է նա, գժուարանում են իրենց հաշիւները ստուգելու, բայց մանուկ հասակում ձեռք բերած սովորութիւնը յաղթում է այս բնական ատելութեան։

*) Education des filles. III Գլուխ.

Ամենին յայտնի է, որ ճիշտ հաշիւներ պահելը տնտեսութեան մէջ կարգ ու կանոն է սահմանում»։ *)

Այդ հիման վերայ, մանուկը կարող է ազատութեամբ շարունակել թուաբանական գիտութեանց ուսումնասիրելը, առանց վնասելու իւր մտաւոր ընդունակութիւնները։



*) Education des filles. Գլուխ. VII.

... անհաս և մտնայ և քղայ Գլխ մամեկտումն
... արա Ի քղայ ցիւտման քաղի մտնի քլ
... արա Ի քղայ ցիւտման քաղի մտնի քլ
... արա Ի քղայ ցիւտման քաղի մտնի քլ
... արա Ի քղայ ցիւտման քաղի մտնի քլ

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԴԼՈՒԽ

Մեծողիքական կրթութեան էութիւնը:



Համառօտենք նախընթաց գլխներում ա-
սածը:

Հազիւ թէ մանկան աչքերը կենդրօնանում
են շրջապատող առարկաների վերայ, հազիւ թէ
նա սկսում է թօթուկել, նորա խելքը նոյնպէս
սկսում է զարգանալ: Մանուկն ամեն ինչ ու-
զում է իմանալ, ամեն ինչ զննել: Անյապաղ
հարկաւոր է օգուտ քաղել բնութեան այս առա-
ջին ցուցմունքներից եւ աւիթներից: Պէտք է
հասկացնել նորան ո՛չ միայն այն, ինչի մասին
հարցնում է, այլ եւ նորան աւիթ պէտք է տալ
առարկաններն ու երեւոյթները զննելու: Այդ-
պիսով, նորա դաստիարակութիւնը անմիջապէս
բնութեան իրական երեւոյթների ուսումնասիրե-

լուց կը սկսուի, եւ ո՛չ թէ կարգալ—գրելուց,
ինչպէս սովորարար լինում է:

Որպէս զի նորա գաղափարները կարգի բե-
րենք, եւ նորա դիտողութեանց շրջանն ընդլայն-
ենք, հարկաւոր է ձեռք բերել պատկերների ժո-
ղովածուներ, որոնք պատկերացնէին բնութեան
առարկաններն ու երեւոյթները եւ դասաւորուած
լինէին տրամաբանական կարգով: Այս պատկեր-
ների ժողովածուները մայրական դաստիարակու-
թեան հիմք դառնալով, ո՛չ միայն կը նպաստեն
մանկան գաղափարները կարգի բերելու, այլ եւ
կը պտղաբերեն ու կը զարգացնեն նոցա:

Ք.

Պատմական նշանաւոր անցքերն ու եղելու-
թիւնները նոյնպէս կարող են պատկերներով ներ-
կայացուիլ եւ սորանից պիտի օգտուիլ, աւան-
դելու մանկան միանուագ պատմութիւնն ու
բարոյագիտութիւնը: Միշտ աչքի առաջ ունենա-
լով դարերով սրբագործուած բնտիր օրինակներ,
մանուկը դիւրութեամբ է սեպհականում արդա-
րութեան, բարութեան, վեհութեան եւ ազնիւ
բնաւորութեան գաղափարները: մի խօսքով, բո-
լոր այն զգացումները, որպիսիք մենք կը ցան-
կայինք արմատացած տեսնել մեր աշակերտների
սրտերում: Այդպիսի պատկերների օգնութեամբ

մենք առիթ ենք տալիս մանկան ապրել եւ զարգանալ մարդկութեան մեծ եւ հանձարեզ արարածների մէջ:

Աշխարհագրութեան դաստ-ութիւնը նոյն-պէս պատկերներով է կատարւում, որոնք ներկայացնում են տեղական բերքերն ու կենդանիքը, զանազան երկրների բարքն ու սովորութիւնները: Եթէ մանկան նախապէս կը բացատրէք, որ այնպիսի ընդարձակ առարկաները, ինչպէս օրինակ՝ տուներ, որի մէջ նա բնակւում է, այգին՝ որի մէջ նա զբօսնում է, նորան ծանօթ շրջակաները, կարող են թղթի վերայ փոքր գիրքով նկարուել, այնուհետեւ նա շատ շուտ կը հասկանայ, որ քարտէսի վերայ երկրի մի ամբողջ կողմը կը ներկայացուի, իսկ երկրագնտի վերայ ամբողջ երկիրը:

Վերոյիշեալ պատկերների բացատրութիւնը, նպաստելով հոգեկան կարողութեանց զարգանալուն, ընդ նմին նորա յիշողութեան մէջ առանց ծանր աշխատանքի, կը տպաւորի մի քանի արուեստագիտական անհրաժեշտ դարձուածքներ:

Պ.

Մանկան մէջ գեղարուեստների սէրը զարթնում է այն բոլորի ազդեցութեամբ, ինչ նորան շրջապատում է: Ապա հսկելով, որ նա ամեն ինչ

կանոնաւոր կատարէր, եւ նորան առիթ տալով, կանոնաւորապէս զարգացնել իւր հակումները, մենք գիւրութեամբ կը հասնենք մեր նպատակին, այն է՝ մեր մանուկը կ'ունենայ զօրեղ եւ հաստատուն ձայն, զարգացած լսելիք, լաւ ձեռք եւ վարժուած աչքի չափ:

Նկարչութիւնը, գրելն ու կարգալը միանուագ պիտի աւանդուին: Հետզհետէ, երբ մանուկը կը զարգացնէ ձեռքի ու աչքի չափը, քարետախտակի վերայ գծեր ու պատկերներ նկարելով, եւ նոցա հաւասար ու յարաբերական մասերի բաժանելով, նորա ուշադրութիւնը պէտք է այն պարզ, տարրական մասերի վերայ դարձնել, որոնցից ձեւակերպւում են բոլոր տառերը: Սովորելով տառերը գրել, նա միեւնոյն ժամանակ կ'ուսանի անուանել նոցա եւ նոցանից բառեր կազմել, այնպէս որ երբ նա կ'իմանայ բոլոր տառերը գրել, կը կարողանայ ո՛չ միայն անուանել նոցա, այլ նա եւ կարող է վանկեր ու բառեր կազմել եւ կարգալ:

Մանուկը կարող է ճիշտ արտասանել բառերը, եթէ նորա հետ միշտ կանոնաւոր լեզուով կը խօսեն: Ուղղագրութիւնը նոյնպէս գործնականապէս է սովորում: քարետախտակի վերայ գրելով իրեն շրջապատող առարկաների անունները եւ այն երեւոյթները, որոնք նորա աչքի առաջ են կատարւում: Այս զբաղմունքները

պէտք է որոշ աստիճանաւորութեամբ կատարուին. այնուհետեւ մանուկը կարող է ամենակարճ միջոցով եւ առանց մտաւոր ոյժերը լարելու, նկարագրել, եւ մինչեւ անգամ փոքրիկ շարադրութիւններ գրել. գրեթէ առանց ուղղագրական եւ ստուգաբանական կոպիտ սխալների, դեռ եւս քերականութեան դասագիրք չը տեսած: Նա ինքն իւր համար, այդպէս ասել, գործնական քերականութիւն կը կազմէ, արտագրելով քարեստախտակի վերայ արած վարժութիւնները առանձին տետրակում: որը նորա մօտ է մնում: եւ երբեմնայէս աչքի է անցնում:

Թուաբանութիւնը նա դիւրութեամբ է ուսանում: Նա թուարկել չը գիտենալով, թուաբանութեան չորս գործողութիւնները կատարել կ'իմանայ, մինչեւ անգամ կարող է հեշտ խնդիրներ լուծել, դեռ թուանշաններ գրել չ'իմանալով: Այս բոլորը նա կը սովորի առանց մտաւոր ոյժերը սաստիկ լարելու, այդպէս ասել կատակ անելով վաճառականի կամ տանտիկնոջ դերը կատարելիս: Այս սկզբնական վարժութիւններից յետոյ, նորա համար դժուար չի լինիլ յաջողակութեամբ առաջ ընթանալ:

Պ.

Ակներեւ է, որ մեր ուսուցման եղանակը մի նպատակ, մի գաղափար ունի, որը միացնում:

պահպանում ու կցորդում է բոլոր առանձին մասերը: Գաստիարակութեան հիմնաքարը մանկան բնական ձիրքերն ու հակումներն են, եւ բնութեան սկզբնական ցուցմունքները: Ուսուցման սոսկ գործնական ուղղութեան ժամանակ, որը իրականութեան, եւ ոչ թէ վերացական ու պայմանական սկզբունքների վերայ է հիմնուած, նորա ընդ միշտ ի նկատի են առնվում: Այդպիսի եղանակով, դաստիարակութիւնը մարդուս բոլոր ընդունակութեանց բնական հակումների անհրաժեշտ պահանջն է դառնում: Մանկան զարգացումը, առանց յոգնեցնելու, առանց բռնի ստիպողական միջոցների, աճում է, խոհեմաբար մշակուող ծաղկի նման, որից ամեն վնասակար բաներ հեռացնում են, եւ ընդհակառակն շրջապատում նորան այն բոլոր բաներով, ինչ կարող էր նորա բարգաւաճմանը նպաստել:

— մեծ է միտաբանութիւնը որ արդիւնք է իր իր...
 — ուր զրուստ Կարմիր...
 — մի մտն...
 — ու նախա...
 — ու նախա...
 — ու նախա...

ՏԱՄՆԵՒԵՐԵՔԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Քացատրութիւններ եւ նկատողութիւններ:—Այս մեթոդի զխաւոր նպատակը:—Հիմնական սկզբունքներ:—Մանկան աւանդած հաստատուն սերմերը:—Մանկան բոլոր կարողութեան երեւան ելնիլը:—Ինչպէս եւ ղէպի գործունէութիւն զրոյվում մտքի բոլոր զօրութիւնները:—Անհատական ձիրքերի պահպանելը:—Ծանր եւ զօռւար աշխատանքներին ընտելացած մանուկը:—Վարդօրօ զաստիարակելու ահագին օգուտը:—

Մեզ մնում է միայն մի քանի նկատողութիւններ անել, եւ մի քանի բան բացատրել:

« . Այս մեթոդի գլխաւոր նպատակն է մանկան մտքի լուսաւորելը, նորանում առողջ դատողութիւն եւ արդարութիւն զարգացնելը, եւ այլն. այսինքն՝ նորա բնական ձիրքերը զարգացնելու եւ կատարելագործելու, նոցա հզօր ու կարող անելով, որ ընդունակ լինէին սեպհական ոյժերով ամենաընտիր ուղղութեամբ գործելու: Այս արդիւնքները մեր մեթոդով են ստացվում: առանց մանկան չափազանց աշխատութեանց, ա-

ռանց ստիպողականութեան, միայն եւ եթ խրախուսելով նորան ղէպի այն խաղերը, որոնք մարմնու բոլոր գործարանների զարգացմանն են նուպաստում: պահպանելով բարի կրքերի ցանկութիւններն ու հակումները:

Բ. Մեր մեթոդի հիմանց մէջ այն կանոնն է դրած, որ գիտութիւններն ու արուեստները մեր ընդունակութեանց զարգացմանը պիտի նպաստեն, եւ ո՛չ թէ միայն մեր սեպհականութիւնը դառնան: Վերջինս՝ երկրորդական բան է. այն ինչ առաջինը՝—ամենակարեւոր: Այս կանոնին հետեւելով, մենք կը տեսնենք, որ մանկան գալափարները աւելի զարգացած կը լինեն, նորա գիտութիւններն աւելի ընդարձակ, եւ նա մանաւանդ աւելի պայծառ ու բարեյաջող, քան այն ղիպուածում: եթէ մենք այլապէս վարուէինք. վասն ղի, դաստիարակութեան այսպիսի եղանակը, բնութեան ցուցմունքներին ու պահանջներին համապատասխան է:

Գ. Ոչ միայն մեր մանկան մտաւոր ընդունակութիւնները կը զարգանան ու կ'ամրապնդուին, այլ նա մի եւ նոյն ժամանակ բազմաթիւ օգտակար եւ կարեւոր տեղեկութիւններ կը ստանայ: Նա շատ պայծառ ու ճշգրիտ գալափարներ կ'ունենայ ընդհանուր, եւ նա՛ մանաւանդ ազգային պատմութեան ամենանշանաւոր անցքերի ու եղելութիւնների մասին: Աշխարհագրու-

Թեան պատմական մասը նա այնքան կ'իմանայ, որ
 ոչ մի քիչ թէ շատ նշանաւոր երկիր, բոլորովին
 անյայտ չի լինի նորան. նա աեզեակ կը լինի
 նորա բերքերին, ընդհանուր գաղափար կ'ունե-
 նայ նորանում բնակող ազգերի, նոցա բարձի-
 ու սովորութիւնների վերայ: Նա կ'իմանայ ամե-
 նագլխաւոր հանքերի անուններն ու յատկու-
 թիւնները. նա կարող կը լինի, ամեն մի քայլա-
 փոխում պատահող բոյսերը զանազանել. նորան
 ճանօթ կը լինին նոցա յատկութիւնները, նոցա
 օգտակար գործածութիւնը ընտանեկան տնտե-
 սութեան, արուեստի ու արգիւնագործութեան
 մէջ: Նա կարող է նոյնպէս ճանաչել իրեն շրջա-
 պատող կենդանիքը, եւ նորան յայտնի կը լինին
 այն օգուտները, որպիսիք նոքա կարող են տալ
 մարդկութեան:

Բայց ամենագլխաւորը, որ նա կարող է այդ-
 պիսի դաստիարակութեամբ իւրացնել, այդ նորա
 հոգին ազնուացնող, բարոյականութեան վերայ
 ունեցած գաղափարն է: Առողջապահական կա-
 նոնները նա կը սեպհականէ իւր առողջութիւնը
 պահպանելու համար: նա բոլորովին կանոնաւոր կը
 գրի ու կը խօսի իւր մայրենի լեզուով: Եւր մտքերը
 նա զիւրութեամբ կ'արտայայտէ. եւ երբէք չի դժո-
 ւարանայ գործնական կեանքի մէջ պատահող թո-
 ւաբանական խնդիրները լուծելու: Բայց ամենից
 կարեւորն այն է, որ նա ինքը ընդունակ կը լի-

նի: առանց դաստիարակի օգնութեան, լրացնել
 իւր կրթութեան պակասորդը:

Ձեր ուշադրութիւնը այս բանի վերայ դարձ-
 րէք. մեր մեթօդով դաստիարակած մանուկը, եր-
 բէք այն մանկան չի նմանիլ, որին սովորաբար
 անուանում են՝ «Un petit prodige»: Այդպիսի
 մանուկները այն բոյսերի նման են, որոնք տաք
 ծաղկոցներումն են աճել. նոցա բոլոր ընդունա-
 կութիւնները սաստիկ լարվում են, որպէս զի,
 առաւել արագութեամբ գործեն, ի վնաս իրենց
 կենսական ոյժերի: Այն ինչ, մեր մանուկը բոլորո-
 վին ուրիշ պայմանների մէջ է գտնվում: Նորա
 բոլոր աշխատանքները, վարժութիւններն ու դա-
 սերը նպաստում են ընդունակութիւնները ամ-
 րապնդելու եւ զարգացնելու, առանց բռնի մի-
 ջոցների, բնական օրինաց համաձայն: Իստի-
 արակութեան ողջ աստիճանաւորութիւնը այս
 նպատակին է յարմարվում: Բոլոր ուսումնական
 գաղափարները, այդպէս ասել, երկրորդաբար են
 ձեռք բերվում: իբրեւ ինքն իրենց աճելով, Բայց
 եւ այնպէս, մենք բաւականաչափ խօսեցինք այս
 առարկայի մասին. ընթերցողներն անկասկած,
 արգէն լիովին ըմբռնեցին նորա նշանակութիւնն
 ու արժանաւորութիւնը:

Գ. Ակզբնական դաստիարակութեան գլխաւոր
 նպատակն աչքի առաջ ունենալով, որը կայա-
 նում է մարգուս հոգւոյ եւ մարմնոյ զարգաց-

ման մէջ, դաստիարակը ընդ նմին, ակամայ բոլոր գիտութեանց ու արուեստների սերմերն է ցանում մանկան հոգում, որոնք ապագայում պէտք է աճին ու զարգանան: Մեր ուսուցման մեթօդով, մանկան բոլոր ոյժերը բնականաբար են ներգործում, նոցա կառավարող օրինաց համաձայն: Նորան պարզ ու կանոնաւոր կերպով բացատրում են շրջապատող բոլոր իրերն ու երեւոյթները: Հէնց սորանով: նորան հաղորդում են բոլոր գիտութեանց սերմերը, նորա խելքը բոլոր տեսածը ու լսածը ընդունում եւ իւրացնում է: Կանոնաւոր զբաղմունքների ժամանակ, մարմնու բոլոր գործարանները գործողութեանց համար հմուտ զէնքեր են դառնում: Գեղարուեստների սերմերը, որոնք ամենատարրական գաղափարների մէջ պատահում են, մանկան հոգու մէջ խորը, անդրդուելի արմատներ են ձգում: Թափանցելով նորա ողջ գոյութեան մէջ: Ճշմարիտ վեհութեան, ազնուութեան ու յսեմութեան գաղափարները, մարմնանում ու աճում են մանկան հասակի հետ: Այս յատկութիւնները մարդու ճշմարիտ կատարելագործութեան անհրաժեշտ պայմաններն են: Այդպիսի արդիւնքները անգին են, եւ աւելի բեղմնաւոր, քան մեզ առաջին անգամից երեւում է: Կլինտիլիանը ուշադրութիւն է դարձնում «Մանկութեան պատարաստ»-ում՝ որ ճշմարտութեան վերայ, որը յոյները սյնպիսի

մարդոց համար էին գործածում, որոնք իրենց պարապմունքներով նշանաւոր յառաջագիմութիւններ էին արել*):

Փորձով ստոնգուած է, որ յայտնի հասակից յետոյ ոչինչ ջանքեր չեն կարող հնչիւններ հանել տալ այն լարերից, որոնք մինչեւ այդ ժամանակ համր էին մնացել. (Տիկին Նեկկէր դը-Սուսիւրի գեղեցիկ դարձուածքի համաձայն) եւ յիրաւի, օրքան մարդիկ կան, որոնք ոչինչ չեն տեսնում, ոչինչ չեն զգում: «Շատ ուշ ձեռք բերած յատկութիւնները, միշտ կարծես թէ հատ ու կտոր եւ անկապ են լինում: Մենք պիտի առաջին մանկութեամբ օգտուինք, որ կարողանանք մանկան՝ ձեռք բերելի յատկութեանց վերայ մի դիւրին ցանց տարածել, որը կարողանար դոցա բռնել եւ կապկպել. մենք մտածող ընդունակութեանց համար, բոլոր ճանապարհները պիտի բանանք. պէտք է առիթ տանք, որ կենսական հիւթերը պտտէին բոլոր երակներով, եւ բազմացնենք խելքի կենսական աղբիւրները» **): Այս բոլորը ստացվում է մեր մեթօդով:

Աւսումնասիրեցէք հանճարեղ մարդոց կեանքը կամ նոցա՝ որոնք մարդկային գիտութեանց որեւէ ասպարիզում հռչակուել են, եւ դուք գրե՛ թէ

*). Inst. orat. Առաջին գիրք, XIV գլուխ.
 **). M-me Necker de Saussure, L'éducation progressive, liv. IV. chap. II

միշտ կը տեսնէ՛ք, որ ամենափաղ մանկութիւնից նոցա ուշագրութիւնը, գանազան ճանապարհներով, միշտ եւ հանապաղ (այն փաստերի, այն իրողութիւնների վերայ էր լինում դարձրած, որոնք որեւէ յարաբերութիւն ունէին նոցա մասնագիտութեան հետ: Ապա՛ ուրեմն, ամենամատաղ հասակից ցանելով մանկան հոգում բոլոր նորա զարգացման նպատող սերմերը, մենք մի եւնոյն ժամանակ յառաջ ենք մղում մտքի բոլոր գործողութիւնները. իսկ անհատական ձիրքերը չեն դանդաղիր երեւան ելնելու, ամենեւին չը կասկածելով, թէ նոքա կարող էին խեղդուիլ: Կլինտիլիանը համոզմամբ ասում է. «Նրբեմն մանկան մէջ մեծ յոյսերի նշոյլներ են երեւում, որոնք տարէցտարի կորչում են. սորանից պէտք է եզրակացնել, որ նոքա՝ ո՛չ թէ զուրկ էին բնական ընդունակութիւններից, այլ հոգատար խրնամբից»:*) .

Մեր առաջարկած դաստիարակութեան եզանակը՝ լիովին հովանաւորում է, Կլինտիլիանի յիշած, յոյսերի նշոյլներին՝ եւ երբէք չի թոյլ տալ ոչնչանալու անհատական տաղանդներին. իսկ սորանում կայանումէ մեթօդի մեծ արժանաւորութիւնը, որովհետեւ, ինչպէս Վիտէն էլ նկատում է. «Ամենակատարեալ գիտութիւնները, ամենածանր աշխատանքները, ամե-

*) . Institution oratoire. Առաջին գիրք.

նահասատուն յոյսերը նսեմանում են իսկական տաղանդի ամենափոքր նշոյլի առաջ:*) .

Ե. Նրբ մեր մեթօդով դաստիարակուած մանուկը որեւէ դպրոց մտնի, նա բոլոր առարկաններից սաստիկ յառաջադէմ կը լինի. նորա կանոնաւոր զարգացած խելքը աւելի ու աւելի ամրապնդուելով, բաւականին ոյժ կ'ունենայ, որ կարողանայ դաստիարակութեան վատ եղանակներին դիմագրել, որ կարողանայ ծանր զբաղմունքներին յաղթել, գերազանցել բոլոր արգելքներին ու զժուարութեանց, որոնք կարող էին թուլացնել նորա վառ եռանդը, եւ յաղթահարել չոր ու ցամաք տեսական գիտութիւնները: Մի քանի ամուսնում նա այնքան գործ կը կատարէ, որքան ուրիշները մի քանի տարում չեն անել. նոյն այդ զբաղմունքները, որոնք մատաղ հասակում կարող էին յօգնեցնել, թուլացնել կամ բոլորովին մեռցնել նորա մտաւոր ընդունակութիւնները, եւ նորան անընդունակ դարձնել ապագայ յառաջագիմնութեան, այժմ նոցանով, հաճելի բաւականութեամբ է զբաղուում:

Գ. Եթէ մենք կամենայինք այս երկու բանի մէջ ընտրութիւն անել. կամ մանկանը մատաղ հասակում բազմի բերմունքին կամ հանգամանքներին թօղնէինք, ինչպէս սովորաբար անում ենք, իսկ ապա նորան, դպրոցական կրթու-

*) Revue des deux Mondes. Նոյեմբերի 1. 1869թ.

Թիւն տայինք: Կամ թէ մանկանը, մատաղ հասակում այնպիսի դաստիարակութիւն տայինք՝ որը մեռցնէր նորանում յառաջագիմութեան սէրը, խեղտելով բոլոր մտաւոր ու հոգեկան կարողութիւնները, մենք առանց մի րոպէ տատանվելու, առաջին եղանակը կը գերադասէինք երկրորդից: Իւրաքանչիւր բանիմաց մարդ մեզ հետ կը համաձայնի: Առաջին դիպուածում, մեր մանուկները դեռ միջոց չ'ունին օրինաւոր մարդիկ դառնալու, եւ եթէ անյաջող հանգամանքները կը ստիպեն նոցա զբաղմունքներէ յաջորդական ընթացքն ընդհատելու, դարձեալ նոցա մէջ ցանաժ գիտութեանց սերմերը կը շարունակեն զարգանալ տրամաբանական կարգով: Կեանքի անխուսափելի օրէնքի պատճառով, չը նայելով որ մանուկները բազմի բերմամբ, ինչ տեսակ շրջանի մեջ էլ ընկնէին: Երկրորդ դիպուածում նոքա չեն կարող մի հաստատ բան իւրացնել. նոքա ընդունակ կը լինին միայն, առօրեայ գործողութեանց. նոցա գործունէութիւնը անօգուտ, մինչեւ անգամ վնասակար կը լինի: Թէ իրենց եւ թէ հասարակութեան համար:

ՏԱՄՆԵՒԶՈՐՍԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ.

Այս մեծօղի իրագործման միջոցները Թէ ընտանիքում եւ Թէ ամբողջ հասարակութեան մէջ: Մայրը եւ աւ հասարակ կլինը դաստիարակի դերում:—

Մեր մեթօդի իրագործելու համար, մի քանի ծախսեր ու յարմարութիւններ են հարկաւոր. նախ՝ պէտք է վերոյիշեալ պատկերների ժողովածուները ձեռք բերել. բ' մեծ դահլիճ պատրաստել, ուր մանուկները կարուանային խաղալ եւ ուսանել. գ. Այս դահլիճի պատերից մեծ սեաւ գրատախտակներ կախել, որոց վերայ մանուկները կարողանային ազատ գրել եւ նկարել: Սորանով վերջանում են ամենագլխաւոր ծախսերը:

«.) Հմուտ գրչով նկարած, եւ սիստէմատիքաբար դասաւորուած պատկերների ժողովածուները, ամենաանհրաժեշտ պատկանելիքն են, մեր մեթօդով յաջողութեամբ ուսուցանելու համար: Եւ յիշուի, պատկերացումն, նկարների

օգնութեամբ, ամենից աւելի սիրելի է մանկանը, որովհետեւ նա միանգամից ըմբռնում է նոցա առանց սկզբնական նախապատրաստութեան: Նայելով որ եւ է առարկային: կամ որ եւ է տեսարան պատկերացնող նկարին, նա այնպէս ապշում է, կարծես թէ իրականութեան մէջ է տեսնում: Պատկերացած առարկաների համեմատութիւնը իրականութեան հետ, մեծ բաւականութիւն է պատճառում նոցա: Սորանով է բացատրվում: Թէ ինչո՞ւ մանուկները այնքան սիրում են պատկերներ զննելը: Այս հիման վերայ, մենք ընդունում ենք պատկերները, (որոնցով օգուտ ենք քաղում մեր եղանակով աւանդելիս) ո՛չ միայն իբրեւ օժանդակող միջոցներ, այլ ամենագլխաւոր հիմունքներից մինը: Նոքա շատ յաջողութեամբ փոխարինում են իրական առարկաներին: Սոյնպէս եւ զանազան առարկաներ ներկայացնող խաղալիքներ շատ օգտակար են մեր մեթօդի համար: Պատկերների եւ իրական առարկաների միջոցաւ ուսուցանելը այնքան լաւ է, որ միշտ եւ ամենուրեք, այդ եղանակը արժանեօք էր գնահատվում: շատ տեղերում փորձում էին յարմարացնել այս տեսակ եղանակները, ինչպէս օրինակ՝ Շվեդիայում, Գերմանիայում, Անգլիայում, Իտալիայում, Ամերիկայում, եւ այլն. բայց ո՛չ մի տեղ պատկերները ամբողջացուցած մեթօդի հիմք չէին ընդունում: ո՛չ մի տեղ նոցանից չէին օգ-

տվում սիստեմատիքաբար դաստիարակելու եւ ուսուցանելու համար, որը պիտի կարգալ—գրելուն նախորդէր:

Բ. Հարկաւոր է մի մեծ դասասենեակ, ուր մանուկները կարողանային վազվզել: Թէ եւ մեր մեթօդով, երեխայի ուսուցումը մեծ մասամբ այգում, դաշտում եւ առ հասարակ բաց օդում կը կատարուի, բայց եւ այնպէս, տանն էլ հարկաւոր է մի առանձին դասասենեակ ունենալ: Դա պէտք է ընդարձակ լինի, որովհետեւ մեր մեթօդով բոլոր դասատուութիւնը առաւելապէս իրական առարկաների, կամ նոցա պատկերացումների վերայ է հիմնվում, եւ այս պատճառաւ էլ, բաւականին ազատ տեղ պէտք է լինի, ուր հնար լինէր մեծ պատկերներ, զանազան մօդելներ ու խաղալիքներ տեղաւորել, որոնք փոքր դիրքով բոլոր իրական առարկաները ներկայացնէին: Մեր մեթօդով մանուկը պարտաւոր չէ՝ անընդհատ նրստած մնալ. շատ անգամ դասերը կանգնած, սենեակում զբօսնելիս կամ խաղալիս են կատարվում. առ հասարակ, մանուկն աւելի շարժողութեան, քան հանգստութեան մէջ պէտք է լինի:

Գ. Մեծ գրատախտակները նոյնպէս կարեւոր են: Գրատախտակի վերայ մատիտով, կամ կաւիճով նկարելը շատ հեշտ է, եւ այսպիսի զբաղմունքը մանուկներին հաճելի է: Բայց նստած ու կուրծքը գրասեղանին սեղմած տետրակի վրայ

փոքրիկ տառեր գրելը շատ վնասակար է, ինչպէս առողջութեան, նոյնպէս եւ ճշմարիտ կրթութեան: Բոլոր գրաւոր զբաղմունքները կանգնած պիտի կատարուին, մատիտով, մեծ գրատախտակի վերայ:

Դ. Այդ նպատակի համար, նոյն իսկ բնութիւնից նախասահմանուած ճշմարիտ դաստիարակչութիւն՝ —մանկան մայրն է: Նորա պարտաւորութիւնն է, մեր ցոյց տուած միջոցներով, մանկան բոլոր ընդունակութիւնները կանոնաւորապէս զարգացնել: Սկզբնական դաստիարակութիւնը նոյն իսկ ընտանիքի մէջ պիտի կատարուի:

Բայց այս բանը միշտ հնարաւոր չէ: Այն ինչ սկզբնական դաստիարակութիւնը բոլորովին անհրաժեշտ է եւ պէտք է ամենին մատչելի լինի:

Այս բանին հասնելու համար մենք առաջարկում ենք հետեւեալը: Ինչպէս ներկայումս հասարակ դպրոցներ կան, դոցա նոյն եւ նման դպրոցական հիմնարկութիւններ պիտի հաստատուին, լի սկզբնական դաստիարակութեան բոլոր անհրաժեշտ միջոցներով, որպիսիք մենք վերը յիշեցինք: Այն փոքրիկ մանուկները, որոնք չէին կարող ընտանեաց մէջ դաստիարակուիլ, այս հիմնարկութեանց մէջ կարող էին օրուայ մի մասը անցուցանել, պարապելով հմուտ եւ փորձուած

դաստիարակչութեան առաջնորդութեամբ, որը նոցա համար մօր տեղն է բռնում:

Մօրը՝ իբրեւ դաստիարակչութեան, կարող է միայն կինը փոխարինել. եւ յիշուի, միայն կինը կարող է մայրական զգացումներ ու հոգացողութիւն ունենալ: Բնական քնքշութիւն, փառաքշական ու կէս-մանկական ձեւեր եւ տոկունութիւն՝ —առանց խտութեան, —ահա՛ այն յատկութիւնները, որոնք նա մանաւանդ անհրաժեշտ են դարձնում կնոջը մանուկների սկզբնական դաստիարակութեան համար:

Ե. Բացի անթիւ բարոյական օգուտներից, կանայք՝ իբրեւ դաստիարակչութեան, ունին նաեւ, ուրիշ առաւելութիւններ, գոնէ՛ ներկայումս, դրամական վարձատրութեան կողմից նոքա ուսուցիչներից առաւել արժան են վարձվում: Իսկ այս հանգամանքը չը պէտք է բարձի թողի առնել: Խոհեմ տնտեսագիտութիւնը՝ կը թոյլատրի բազմացնելու այդ տեսակ մանկական ծաղկոցների թիւը, որոնք պիտի տարածուէին ամբողջ երկրում: «Սկզբնական դաստիարակութիւնը գիւղերում՝ առանց կանանց մասնակցութեան, չի կարող հաստատապէս տարածուել»:^{*})

«Ամերիկայի դպրոցներում գրեթէ բացառապէս, կանայքն են պարապում: 1861 թուին,

^{*}) Aimé—Martin. Education des mères de Famille. ch. XVII.

Մասաչուսէտ նահանգում հաշվում էին 4,000 վարժուհիք, եւ միայն 1,500 վարժապետներ: Նիւ-Եօրքում: կային 7,538 վարժապետներ, եւ 18,715 վարժուհիներ»*) .

«Այս սիւտեմը մեծ առաւելութիւն ունի, ասում է Լափէն. նախ եւ առաջ՝ դրամական կողմից, որովհետեւ վարժուհու ռոճիկը երեք անգամ պակաս է վարժապետի ռոճիկից. այն ինչ կինը առաւել լաւ է աւանդում այն, ինչ ինքը գիտէ: եւ բացի սորանից՝ կինը այնպէս խիստ կոպիտ յամառ եւ ուսումնամուլ չէ, ինչ պէս մարդը»**).

Եւ թէ երկտասարդ օրիորդները ուսման ընթացքն աւարտելուց յետոյ մի երկու տարի նոսրէին իրենց փոքրահասակ մանուկների դաստիարակչուհու պաշտօնին: նոքա ոչ միայն մանուկների կրթութեան գործի համար օգտակար կը լինէին, այլ եւ նոյն իսկ իրենց համար՝ որովհետեւ, ոչ մի բան այնպէս չէ զարգացնում մատաղահաս կանանց, ոչ մի բան այնպէս լաւ չէ լրացնում նոցա կրթութիւնը, եւ ոչ մի բան այնպէս լաւ չէ նախապատրաստում նոցա մայրական պարտաւորութիւնները կատարելու, որքան այդպիսի պաշտօնավարութիւնը: Այս դիպուածում աւելի

*) M. de Laveye. Revue des Deux Mondes. 15 նոյ. 1865.

***) Revue des Deux Mondes.

հարուստ դասակարգերը օրինակ պիտի դառնային ուրիշների համար, եւ այդպիսով բարձրացնէին ու վսեմացնէին ամբողջ հասարակութեան բարոյականութիւնը:

Մի յարգելի տիկին, որը պատուաւոր տեղն է բռնում դաստիարակութեան գործում, ի միջի այլոց, ասում է հետեւեալը. «Թէ կինը լսէր բնութեան ձայնին, նորա ճշմարիտ կոչումը պիտի լինէր մարդկային ցեղի կատարելագործութիւնը...»*: «Այն մայրը, որը, իր դստերը դաստիարակելիս իրեն նպատակ կը դնէր ուսումն աւարտելուց յետոյ միջոց տալ նորան ազքատ մտնուկների դաստիարակութեամբ զբաղուելու, կ'ունենար իւր ձեռքին մի հզօր մեքենայ, որին դիւրութեամբ չէր կարելի շարժել»**).

Ի վերջոյ, մի քանի հատուածներ առաջ կը բերենք, Ֆրանսիական ազգային-լուսաւորութեան նախարարի հրատարակած շրջաբերականից, որը սկզբնական դաստիարակութեան օգուտն է բացատրում: Նախարարը յիշում է, որ մանկական դաստիարակութեան գործում մի րոպէ չի կարելի կորցնել. Ժողովրդի բնաւորութիւնները մանրակրկիտ դարձան: խելքն ու բանականութիւնը ճշմարիտ ճանապարհից շեղուեցան. բնտանեկան

*) M—me Necker de Saussure, L'éducation progressive, liv. I ch. III

***) նոյն.

կապերը թուլացան, ապա ուրեմն անհրաժեշտ կարեւոր է անյապաղ ձեռք զարկել միակ անպարտելի ոյժի՝ — խելքի ու բարոյականութեան վերականգման: Սորան նախադարը յարակցում է. մենք չենք մոռանում, որ մայրը իւր որդւոց առաջին եւ ամենալաւ դաստիարակն է, որ միայն նա է ընդունակ իւր որդւոց սրտում ազնիւ զգացումներ ու վսեմ գաղափարներ սերմանելու. որ դպրոցում աւանդւող բարոյագիտութեան կանոնները ամենափոքր ազդեցութիւն անգամ չեն ունենում մեզ վերայ, եթէ մենք չենք սնուած մայրական առաջին խրատներով ու փայփայանքով. որ իւրաքանչիւր քաղաքացու եւ ամբողջ հասարակութեան ոյժը տարրական դաստիարակութիւնից է սկիզբն առնում»*)



*) Lettre aux maires de Paris. 13 հոկտեմբերի 1870 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էջ 4

- Ընթերցողին 5
- ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ: Դաստիարակութեան նշանակութիւնը:—Ինչո՞ւն է կայանում ճշմարիտ յառաջադիմութիւնը:—Գլխաւոր նպատակը, որը աչքի առաջ պիտի ունենալ դաստիարակութեան ժամանակ:—Նշանաւոր ու կարեւոր փաստեր: 11
- ԵՐԿՐՈՐԳ ԳԼՈՒԽ: Դաստիարակութեան մի ճիւղ, որը բաւականաչափ ուշադրութիւն չէ դարձուցել իւր վերայ:—Երբ պէտք է սկսել մանկան դաստիարակութիւնը:—Ինչպէս է զարգանում մանուկը ծննդեան առաջին օրերից սկսած:—Առաջին տպաւորութեանց ոյժը:—Մանկան շրջապատող բոլոր անձինքն ու առարկաները միշտ եւ հանապազ ընտրելագոյն պիտի լինին: 24
- ԵՐՐՈՐԳ ԳԼՈՒԽ: Մանկական հասակը կառավարող բնազիտական եւ հոգեբանական օրէնքները:—Ի՞նչպէս են կազմվում սովորութիւններն ու բնաւորութիւնը:—Նո՞ր պիտի դրուին այն տպաւորութեանց հիմունքը, որոնք ցանկալի էին, որ հաստատ եւ զօրեղ կերպով զարգանային: 33
- ՉՐՐՈՐԳ ԳԼՈՒԽ: Ի՞նչու այդպէս քիչ են հոգում սկզբնական դաստիարակութեան մասին — Կեթօղի բացակայութիւնը:—Ի՞նչպէս են զանցառութեան տալիս բնութեան առաջին դասերը եւ ընդհատում ընդունակութեանց սկզբնական զարգացումը — Մարդիկ ուղղակի բնական օրէնքների հակառակ են վարվում:—Ցաւալի իրողութիւններ: 44
- ՀԻՆԳԵՐՈՐԳ ԳԼՈՒԽ: Մտաւոր ընդունակութեանց զարգացումը:—Խելքի առաջին նշոյլները:—Հակումն, որը պէտք է խրախուսել:—Ի՞նչպէս պէտք է օգտուիլ բնութեան խրատներից:—Պատկերների նշանակութիւնը սկզբնական կրթութեան գործում:—Ի՞նչպէս հնարաւոր էր բնութեան մէջ

զանուած առարկաները միշտ ձեռքի աակ ունենալ: Եւ ցանկացածին պէս բնութեան երեսոյթներն արտադրել:—Փորրիկ մանկան դասը:—Ի՞նչպէս հնարաւոր էր այս դասը անվերջ շարունակել, չը յօգնեցնելով մանկան ուշադրութիւնը:—Ի՞նչպէս են ցանվում գիտութեանց սերմերը, որոնք պէտք է անընդհատ եւ անզգայաբար զարգանան:

ՎԵՑԵՐՈՐԳ ԳԼՈՒԽ: Պատմութեան անդին ծառայութիւնը սկզբնական դաստիարակութեան գործում:—Ի՞նչպէս է նա զարգացնում սիրտն ու միտքը:—Ի՞նչպէս կարելի էր հետաքրքիր անել մեծ մարդոց կեանքը: Եւ նոցա կեանքի ու գործունէութեան յիշատակը վառ պահել մանուկների սրտերում:—Ի՞նչպէս պէտք է աւանդել այս առարկան:

65

ԵՐԹՆԵՐՈՐԳ ԳԼՈՒԽ: Աշխարհագրութիւն:—Ղրբան մատչելի է այս գիտութիւնը մանուկ հասակին:—Ի՞նչպէս հնարաւոր էր այդ գիտութիւնը մանկան աւանդել բազմաթիւ հաստատուն եւ թանկագին տեղեկութեանց օգնութեամբ:

71

ՈՒԹԵՐՈՐԳ ԳԼՈՒԽ: Ի՞նչպէս զարթեցնել մանկան մէջ գեղեցկի բնագոյմական ճաշակը, իւր բոլոր աւարգանքերով:—Իբրեւ վաղճանակէտ բնութեան առաջին խրատները պէտք է բնորոշել:—Ինչպէս է կազմակերպվում մանկան ձեռքի վարժութիւնը եւ աչքի չափը:—Տարբական նկարչութեան աւանդելու նպատակը:—Ինչպէս են կազմակերպվում մանկան լսելըն ու ձայրը: Տարբական երգեցողութեան աւանդելու նպատակը:

75

ԻՆՆԵՐՈՐԳ ԳԼՈՒԽ: Գրել եւ կարդալ:—Ինչպէս կարող է մանուկը միանուազ նկարչութիւն եւ գրել—կարդալ ուսանել:—Ի՞նչպէս կարող է մանուկը կարդալ եւ մի քանի խօսքեր գրել, չը ճանաչելով մինչեւ անգամ բոլոր տառերը:

81

ՏԱՍՆԵՐՈՐԳ ԳԼՈՒԽ: Ուղղագրութիւն եւ քերականութիւն:—Ի՞նչպէս է մանուկը ուղղագրութեան ընտելանում, առանց քերականութեան դասազբքի:—Գրատը շարադրու-

թիւներ ուսուցանելու դիւրին ու պարզ ոճը: 84

ՏԱՍՆՈՒՄԷԿԵՐՈՐԳ ԳԼՈՒԽ:—Թուաբանութիւն:—Ինչպէս է մանուկը սովորում թուաբանական չորս հիմնական գործողութիւնները, առանց թուաբանական ձեռնարկի:—Գործնական դասաւուսութիւն: 90

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԳ ԳԼՈՒԽ: Մեթօդիքական կրթութեան էութիւնը:— 96

ՏԱՍՆԵՒԵՐԵՔԵՐՈՐԳ ԳԼՈՒԽ: Բացատրութիւններ եւ նկատողութիւններ:—Այս մեթօդի զիջաւոր նպատակը:—Հիմնական սկզբունքներ:—Մանկան աւանդած հաստատուն սերմերը:—Մանկան բոլոր կարողութեան երեսն էլիլը:—Ինչպէս են ղէպի գործունէութիւն գրովում մտքի բոլոր գորութիւնները:—Անհատական ձիրքերի պահպանելը:—Ծանր եւ դժուար աշխատանքներին ընտելացած մանուկը:—Վաղօրօք դաստիարակելու անպիսն օգուտը:— 102

ՏԱՍՆԵՒՅՈՐՍԵՐՈՐԳ ԳԼՈՒԽ: Այս մեթօդի իրադորման միջոցները թէ ընտանիքում եւ թէ ամբողջ հասարակութեան մէջ: Մայրը եւ առ հասարակ կիներ դաստիարակի դերում: 111

Պ. Պ. Բագդատեանց	1
Պ. Գրիգոր Յ. Բաճաթրեանց	2

ՃԱՊՐԱՅԻԼ

Պ. Գրիգոր Յարութիւնեանց	1
Պ. Մարգարէ Խուբլարեանց	1
Պ. Յարութիւն Շահկելտեանց	1
Պ. Գէորդ Դիւանեանց	1
Պ. Նիկողայոս Լալայեանց	1
Պ. Գրիգոր Մէլիք Շահնազարեանց	1
Պ. Առաքէլ Վարդապետեանց	1
Պ. Դաւիթ Մէլիք Շահնազարեանց	1
Պ. Ներսէս Անանեանց	1
Պ. Աւագ Շատիխեանց	1
Պ. Մովսէս Սափարեանց	1
Պ. Առաքէլ Տէր Մարտիրոսեանց	1
Պ. Գէորդ Օրբէլեանց	1
Պ. Աւագ Յովհաննիսեան Տօնիեանց	1
Պ. Սիմէօն Մ. Տօնիեանց	1
Պ. Յովակիմ բէգ Մէլիք Շահնազարեանց	1
Պ. Ա. Բ. Աւետիբեանց (Հարրիբէյի)	1

ԵՐԵՒԱՆ

Տիկին Ս. Տէր Ղևոնդեան	1
Պ. Արամ Մէլեանց	1
Պ. Տիգրան Տէր Յակովբեանց	2
Պ. Վասակ Պապաչանեանց	2
Պ. Ռէ Ռէ	2
Պ. Էմին Տէր Գրիգորեանց	1
Պ. Բժիշկ Լևոն Տիգրանեանց	2

Տիկին Աշխէն Եղիազարեանց	2
Տիկին Եգինէ Խուրաբաշեանց	2
Պ. Յ. Տէր Զաքարեանց	1
Պ. Յ. Գէորգրէզեանց	1
Պ. Վարդան Եղիազարեանց	2
Պ. Պօղոս Պօղոսեանց	2
Պ. Մ. Պանճուլազեանց	1
Պ. Տիգրան Աֆրիկեանց	2
Պ. Աբգար Գուլամիրեանց	1

ՇԱՄՇՈՒԼԴԱՅ

Արժ. Յովսէփ Բաճանայ Արարատեանց	1
Տիրուհի Թէկղէ Արարատեանց	1
Պ. Արարատ Արարատեանց	1

ԱՂԲՈՒԼԱՂ

Տիկին Թագուհի Բօստամբէզեան Բարա- մեանց	1
---	---

ԹԷՈՂՈՍԻԱ

Հ. Բ. Բուշներեանց	1
Պ. Պաքալեանց	1
Պ. Գ. Հալաճով	1
Պ. Վ. Պապիեանց	1

ՓԻԲ ԳԻԻԼ

Գեր. Աստուածատուր Վ. Տէր Յարութիւնեանց	2
Արժ. Մովսէս Բաճանայ Մամիկոնեանց	1
Արժ. Պէտրոս Բաճանայ Ազարեանց	1
Արժ. Յովհաննէս Բաճանայ Մամիկոնեանց	1
Տանուտէր Բէգլար Խօջայեանց	1

Հողաբարձու Ոսկան Խօջայեանց	1
Տիրացու Գալուստ Տէր Վարդանեանց	1
Պ. Վահան Մամիկոնեան	2
Պ. Մարտիրոս Եղիազարեան Եպիսկոպոսեանց 2	
Պ. Սարգիս Տէր Յարութիւնեանց	1
Պ. Միքայել Ազարեանց	1
Պ. Բաբայ Գրիգորեան Ումիդեանց	1

ԳԱՌՆԱԿԵՐ

Պ. Գրիգոր Տէր Եղիազարեանց	2
Պ. Պ. Աղաջանեանց	1
Արժ. Յովսէփ Քահանայ Բալայեանց	1
Պ. Մեսրոպ խօջայեանց	1

ԲԱՐՍՈՒՄ

Պ. Աւագ Մէլիք Առստամեանց	2
Պ. Գրիգոր Աղասարեանց (Գանասար)	1
Պ. Պօղոս Խալաթեանց	1
Պ. Կարապետ Բաշիրեանց	1

ԿԵՏԱԲԷՈՒ

Արժ. Տէր Հմաւօն Բորիեանց	1
Պ. Սիմօն Սարգսեանց	1
Պ. Իսաջան Բուլղատրեանց (Երեմիան)	1
Պ. Աղէքսանդր Բուլղատարեանց	1
Պ. Պէտրոս Խաչատրեան Օտաբայեանց	1
Պ. Աւետիս Արտեմիչ	1

ՄՕԶԴՈԿ.

Պ. Մ. Տուրփայեանց	1
Պ. Ա. Տէր Եսայեանց	1

Պ. Յ. Նասիրէդեանց	1
Պ. Կ. Հլիթեանց	1
Պ. Մ. Երեցփոխեանց	1
Պ. Ս. Մեղրուժեանց	1
Պ. Գ. Լիսիցեանց	1
Օր. Մ. Մահտէսեանց	1
Պ. Մ. Խոսրովեանց	1

ԱԽԱՆՅԻԱ

Պ. Սարգիս Աւագեանց (Ն-ի-է-է)	1
Պ. Յակովբ Մարտիրոսեանց	1
Պ. Գալուստ Տէր Մկրտչեանց	1
Պ. Գրիգոր Տէր Միքայէլեանց	1
Պ. Վահան Տէր Գրիգորեանց	1
Պ. Սեդրակ Ալբերտեանց	1
Պ. Նիկողայոս Տէր Գրիգորեանց	1
Արժ. Մկրտիչ Քահանայ Գայֆաձեանց	1
Արժ. Աբրահամ Քահանայ Ազազեանց	1
Պ. Յարութիւն Յակովբեանց	1
Պ. Գրիգոր Անիեանց	1
Պ. Աւետիս Նահապէտեանց	1
Պ. Յովհաննէս Մ. Նալբանդեանց	1
Պ. Սեդրակ Գ. Մեղրօնեանց	1
Պ. Դաւիթ Օձեանց	1
Պ. Կարապետ Բաշաթրեանց	1
Պ. Գաբրիէլ Տէր Գաբրիէլեանց	1
Պ. Առաքէլ Պապոյեանց	1
Պ. Ներսէս Ռափայէլեանց	1

ԹԻՖԼԻՉ

Երժ. Յովհաննէս աւագ Քաջանայ Տէր	
Պօղոսեան Սարգսեանց	60
Օր. Նատալիա Տէր Մարկոսեան	1
Օր. Ա. Սուսանեան	1
Օր. Վ. Ղօրղանեան	1
Օր. Մ. Ալազաթեան	2
Օր. Նունէ Ղալամբարեան	2
Օր. Ն. Բուղղանեան	1
Օր. Շաղինեան	2
Օր. Ն. Սկանդարեան	1
Պ. Նիկողայոս Խոսրովեանց*)	4
Տիկին Աննա Տէր Սարգսեանց	1
Պ. Գաբրիէլ Միրզոյեանց	1
Պ. Յ. Նազարեանց	1
Պ. Ա. Գուլլակեանց**)	1
Պ. Կ. Թէմուրազեանց	1
Օր. Մարիամ Տէր Աբրահամեանց	1
Պ. Տիգրան Ստեփանեանց	1
Պ. Աղէքսանդր Սուսանեանց	1
Պ. Յովհաննէս Սէմիրեանց	1
Պ. Գաւիթ Առաքելեանց	1
Պ. Պաւլէ Գուրգէնեանց	1
Պ. Եգոր Փիլոյեանց	1
Պ. Աղէքսանդր Շուխեանց	1

*) Նուիրում է Ս. Գայեանեան օրիորդաց Ուսումնարանին:

**) Նուիրում է Հաւաքարու Ս. Մարիամեան օրիորդաց ուսումնարանին:

Պ. Աղէքսանդր Այվազեանց	1
Պ. Ս. Տէր Գրիգորեանց	2
Պ. Մ. Յարութիւնեանց	1
Պ. Յ. Քօչարեանց	1
Պ. Գ. Ենդիբարեանց	1
Պ. Ս. Ղօրղանեանց	1
Պ. Պէտրոս Հայրապետեանց	1
Պ. Սիմէօն Զարգարեանց	1
Պ. Գէորգ Ծովիանեանց	1
Պ. Աւետիք Քալանթարեանց	1

ՂՁԼԱՐ

Պ. Մկրտիչ Անանեանց	1
Տ. Նունէ Անանեանց	1
Պ. Եղիշէ Թաւարրէգեանց	1
Պ. Յովհաննէս Աստուածատրեանց	1
Պ. Մովսէս Թումանեանց	1
Երժ. Խորէն Քաջանայ Ղօրղանեանց	1
Պ. Նիկողայոս Տէր Նիկողայոսեանց	1
Սարկաւագ Գէորգ Աբրակեանց	1
Պ. Առաքել Մուլթանեանց	1
Պ. Մակար Աղաջանեանց	1

ԱՂԼԻՔՍԱՆԴՐՈՊՈՒ

Պ. Սարգիս Մոծակեանց	1
Պ. Ղազար Ղաղարեանց	1
Պ. Յովհաննէս Խաչատրեանց	1
Պ. Կարապետ Տէր Գաւթեանց	1
Պ. Համաղասոյ Ծաղիկեանց	1
Պ. Կարապետ Մինասեանց	2

- Պ. Յակովբ Կրիտեանց 1
- Պ. Յովհաննէս Խաչատրեանց 1
- Պ. Յովհաննէս Սանոյեանց 1
- Պ. Յովհաննէս Յակովբեանց 1
- Պ. Յովհաննէս Վարդպատրիկեանց 1
- Պ. Յովհաննէս Ալոյեանց 1
- Պ. Վասիլ Պարսամեանց 1
- Պ. Մկրտիչ Իսպիրեանց 1
- Պ. Սենեքերիմ Ազարեանց 4
- Պ. Սիմէօն Շահազեանց 1
- Պ. Սողոմօն Սափարեանց 1
- Պ. Սարգիս Հաղարապետեանց 1
- Պ. Աւետիս Ղարախանեանց 1
- Պ. Վասիլ Խալաթեանց 1
- Պ. Պաւղոս Հասան Ջալալեանց (Հ-ընդ) 1

ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍ

- Պ. Ստեփաննոս Սուլխանեանց (Ո-ու-ցել) 1
- Պ. Յովհաննէս Դովլաթբեգեանց (Ո-ու-ցել) 1
- Պ. Յարութիւն Քալանթարեանց (Ո-ու-ցել) 1
- Պ. Լևոն Թիւսիկեանց 1
- Պ. Աղէքսանդր Տէր Մկրտչեանց 2
- Պ. Ամիրջան Թումանեանց (Ո-ու-ցել) 1
- Պ. Քրիստափոր Միքայէլեանց (Ո-ու-ցել) 1
- Պ. Աւետիս Դաւթեանց (Ո-ու-ցել) 1

ԴԱԶԱԽ

- Պ. Արշակ Սիմէօնեանց 1
- Օխական Դպրոց Գիլիլջանու 1
- Պ. Նիկողայոս Մ. Մայիլեանց 1

100 077

ՀՀ Ազգային գրադարան



NL0686212

